Ազգ
Azg
20 ՕԳՈՍՏՈՍ 2011 ՇԱԲԱԹ 145(4763)
ISSN: 1829-1651

# ՀԱԿ-իշխանություն երկխոսության նոր հետաձգում

Երեկ տեղի ունենալիք ՀԱԿ-իշխանություն երկխոսության հերթական ռաունդը տեղի չունեցավ, քանի որ ՀԱԿ ակտիվիստների շուրջը տեղի ունեցած իրադարձությունները հավանաբար այլ սրբագրումներ են մտցնում: Զույգ պատվիրակությունների ղեկավարներ Լեւոն Զուրաբյանի եւ Դավիթ Հարությունյանի միջեւ կայացած հեռախոսազրույցի ժամանակ վերջնական պայմանավորվածություն է ձեռք բերվել հանդիպումը օգոստոսի 23-ին, ժամը 12-ին անցկացնելու մասին (սա ասված էր երեկ տարածված ՀԱԿ-ի հաղորդագրության մեջ): ՀԱԿ-ի պատվիրակության անդամ Դավիթ Շահնազարյանը լրատվամիջոցներին ասել է, որ այդ հանդիպմանը պետք է կքննարկվի միայն ՀԱԿ-ի ակտիվիստների եւ ոստիկանների միջեւ օգոստոսի 9-ի միջադեպը: Ի դեպ, երեկ Հայաստանի Վերաքննիչ դատարանն ազատ արձակեց օգոստոսի 9-ին ձերբակալված ՀԱԿ-ի ակտիվիստներից երկուսին՝ Սարգիս Գեւորգյանին եւ Արտակ Կարապետյանին, առաջին դեպքում քաղաքից չբացակայելու պայմանով, երկրորդ դեպքում 3 մլն դրամ գրավով, իսկ Տիգրան Առաքելյան խափանման միջոց կալանքը թողնվել է ուժի մեջ:

Ս. Խ.

# Խղճի ազատության նոր օրենսդրական փաթեթով հոգեւորությունը քրեականացվում է

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ



ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի աջակցությամբ երեկ «Կոնգրես» հյուրանոցում կազմակերպվել էր մի քննարկում «ՀՀ խղճի եւ կրոնական ազատությունների մասին» օրենքի նոր նախագծի եւ հարակից օրենքների փոփոխությունների վերաբերյալ: Ըստ օրենքի նախագիծը հեղինակած աշխատանքային խմբի ղեկավար, արդարադատության փոխնախարար **Գրիգոր Մուրադյանի**՝ նոր օրենքի եւ հարակից օրենքների նախագծերը կոչված են նոր սկզբունքային լուծումներով իրացնելու Սահմանադրությամբ երաշխավորված խղճի եւ կրոնի ազատության իրավունքը: Փոխնախարարը տեղեկացրեց, որ այժմ գործող օրենքն ընդունվել է 1991 թվականին՝ հիմք ունենալով ԽՍՀՄ համապատասխան օրենքը: Դրանից հետո այդ օրենքում երկու անգամ փոփոխություններ են եղել, սակայն, այդպիսով, գործող օրենքի համակարգային թերությունները չեն վերացվել: Այն դեռեւս իր մեջ կրում է կրոնավախության խորհրդային երկարամյա ավանդույթը: Գործող օրենքը մի շարք այլ թերություններ ունի, այդ թվում՝ տոտալ վերահսկողության պետական հավակնությունը, կրոնական կազմակերպությունների գրանցման բարդացումը, որը թեեւ, ըստ փոխնախարարի, այդպես էլ չի խոչընդոտել բազմաթիվ եւ բազմաբնույթ կրոնական կազմակերպությունների գոյությանը Հայաստանում (որոնք, կարելի է ասել, խեղդում են մեզ-Մ.Խ.): Հոգեւորությունն էլ մինչ օրս քրեականացված չէր: Մի խոսքով, ըստ փոխնախարարի, ոչ թե «դրակոնյան» օրենքներով կարելի է ողջամիտ հավասարակշռություն ապահովել կրոնական ազատությունների եւ հանրային շահերի միջեւ, այլ այնպիսի կարգավորումների միջոցով, երբ արգելքները ոչ թե կանոն, այլ բացառություն կլինեն, սակայն կիրառման դեպքում՝ արդյունավետ կներգործեն:

Տես էջ 8

# Չէր խանգարի

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Քաղաքագետ Զարդուշտ Ալիզադեն, անդրադառնալով վերջին շրջանի հայ-ադրբեջանական բանավեճին, կարծիք է հայտնել, որ «մենք ապրում ենք իրավական միջավայրում եւ պետք է ոչ թե այն մասին մտածենք, թե «ով է ավելի վաղ եկել», այլ թե ինչպես հարգենք մարդու իրավունքները»:

Այս մտքին թերեւս հնարավոր էր համաձայնել, եթե «եկվոր-նստակյաց» բանավեճն ընթանար վերիշխանական մակարդակներում: Խնդիրն անհամեմատ քաղաքականանում է, երբ Ադրբեջանի նախագահն է պաշտոնական ընդունելության ժամանակ հայտարարում, թե «Լեռնային Ղարաբաղում հայերը հյուր են եւ իրավունք չունեն անկախություն պահանջելու»:

Ալիզադեն, անշուշտ, ծանոթ է Իլհամ Ալիեւի այս եւ ուրիշ հայտարարություններին, ներառյալ, որ «այսօրվա Հայաստանն ստեղծվել է բուն ադրբեջանական հողերի վրա»: Եվ այս իրավիճակում ակնկալել, որ «պետք է մտածենք մարդու, այդ թվում՝ ԼՂ ադրբեջանցիների իրավունքները հարգելու մասին», խոստովանենք, առնվազն անհիմն լավատեսություն է:

Մենք, այո, պետք է ապրենք իրավական միջավայրի օրինաչափություններով: Բայց ո՞վ է անտեսում իրավունքը: Տվյալ դեպքում՝ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքը: Պատասխանը միանշանակ է՝ Ադրբեջանի իշխող վերնախավը: Նա է, որ յուրաքանչյուր պատեհ եւ անպատեհ առիթով անընդմեջ հոխորտում է, որ «ԼՂ բնակչությունը, այնտեղ ադրբեջանցիների վերադարձից հետո, կարող է ինքնորոշվել բացառապես Ադրբեջանի տարածքային ամբողջականության շրջանակներում»: Նա է, որ արգելափակում է երկու ժողովուրդների, հասարակությունների ներկայացուցիչների միջեւ որեւէ շփում:

Տես էջ 8

ՀՈԲԵԼՅԱՆ

# Շնորհավո՜ր հոբելյանդ, Վեհափա՛ռ Տեր

## *Գարեգին Բ կաթողիկոսը 60 տարեկան է*

ՏԻԳՐԱՆ ԼԻԼՈՅԱՆ



**Վաղը, օգոստոսի 21-ին լրանում է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ներսիսյան Ծայրագույն պատրիարքի, Ամենայն հայոց սրբազնագույն կաթողիկոսի ծննդյան 60-ամյակը: Ուղիղ վեց տասնամյակ առաջ, 1951 թվականին, այս օրը, բարեպաշտ քրիստոնյաներ Խաթուն եւ Գրիգոր Ներսիսյանի ընտանիքում ծնվեց արու զավակ, որին մկրտելիս տվեցին Կտրիճ պերճախոս անունը, եւ որին վիճակվեց 1999-ին դառնալ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու 132-րդ գահակալը:**

**Տակավին վաղ է գնահատական տալ անցած տարիներին Վեհափառի արած շնորհալի բազմաթիվ գործերին: Սակայն, մեր համոզմամբ, արդեն պատմությանն են պատկանում նրա անխոնջ ու արգասաբեր ջանքերը Մայր եկեղեցին շենացնելու ու ամրապնդելու ուղղությամբ, նրա նախաձեռնած վիթխարի շինարարական եւ վերականգնողական աշխատանքները, հսակ քայլերը ազգային-եկեղեցական կյանքը կարգավորելու նպատակով: Շինարար կաթողիկոս էին անվանում Վազգեն Ա երջանկահիշատակ հայրապետին. շինարար կաթողիկոս արդեն կարելի է իրավամբ համարել նրա գործի արժանի շարունակող Գարեգին Բ Վեհափառին: Դրա օգտին են խոսում Հայաստանում ու աշխարհի տարբեր անկյուններում վեր խոյացած տասնյակ հոյակերտ տաճարները, նորաստեղծ թեմերը, դպրանոցները, հայորդաց տներն ու կրթական այլ հաստատությունները, պետություն-եկեղեցի կառուցողական փոխհարաբերությունների ծավալումն ու խորացումը, միջեկեղեցական եւ միջկրոնական լայնածավալ կապերը, հարյուրավոր գրքերի, բազմաբնույթ արժեքավոր հոգեւոր գրականության լույսընծայումը:**

**Մեր եկեղեցու այսօրվա գահակալը ողջ աշխարհում ունի ճանաչված կրոնական գործչի համբավ, նա էկումենիկ շարժման երեւելի դեմքերից է: Ականավոր կրոնապետի հարուստ կերպարի լոկ մի նրբագիծ էր Վեհափառի համարձակ այցը Բաքու՝ միջկրոնական վեհաժողովի:**

**Գարեգին Բ կաթողիկոսի սեւեռուն եւ հոգատար ուշադրության կենտրոնում են հեռու եւ մոտ Սփյուռքի մեր գաղթօջախները, աշխարհասփյուռ հայության հոգսերն ու ցավերը: Այստեղ նա հանդես է բերում թե՛ ճկուն դիվանագետի, թե՛ հմուտ ու սկզբունքային բանակցողի, թե՛ քաջարի մարտիկի որակները:**

**Ներսիսյան Վեհափառի եկեղեցանվեր եւ հայրենասեր բազմաբովանդակ գործունեության արդյունքն է մեր ժողովրդի զանգվածային վերադարձը դեպի արմատները, կրոնն ու եկեղեցին:**

Տես էջ 2

# Փողով ապահովված ադրբեջանական նոր քարոզչամեքենա

**Վտարանդի կառավարությունները պատմության ընթացքում ոչ թե հարց են լուծել կամ իրականություն արտացոլել, այլ առավելապես զավեշտի ու բեմականացման տարրեր են ներմուծել դրանց առնչվող գործընթացներում:**

**Իսկ երբ դերակատարություն ու առավել եւս ազդեցություն ունենալու հավակնություններ են դրսեւորում առավել ցածր միավորներ՝ նույն «վտարանդիության» մոտեցմամբ, այն էլ՝ անհիմն շարժառիթներով, զավեշտն ամենայն հեշտությամբ կարող է փոխվել խեղկատակության: Սակայն միշտ չէ, որ զավեշտալին անպտուղ գործունեություն է ներկայացնում:**

**«Լեռնային Ղարաբաղի ադրբեջանական համայնքի, միեւնույն ժամանակ Շուշիի շրջանի գործադիր իշխանության ղեկավար» Բայրամ Սաֆարովը, ըստ «Թրենդ» ադրբեջանական գործակալության, հայտարարել է, որ օտարերկրյա պետություններում աշխատանքներ են տարվում ԼՂ «ադրբեջանական համայնքի ներկայացուցչությունների ստեղծման ուղղությամբ»:**

**Սաֆարովը նշել է, թե արդեն իսկ «նշանակալի աշխատանք է տարվել համաշխարհային հանրությանը Ղարաբաղի իրողություններին տեղյակ պահելու առումով»: Ընդ որում, ԼՂ «ադրբեջանական համայնքի ղեկավարը» տեղեկացրել է, որ Ադրբեջանի կառավարությունը «հատուկ ուշադրություն» է դարձնում այդ հարցին:**

**«Մեր դեսպանությունները, սփյուռքյան կազմակերպությունները արտերկրում բավականին ակտիվ են այդ գործում», քարոզչական հերթական մեխանիզմի մասին պետական հոգածության տարրեր է ներկայացրել Սաֆարովը:**

**Ակնհայտ է, որ պետական զգալի ռեսուրսներ են ծախսվելու հիշատակված «ներկայացուցչությունների ստեղծման» համար, որոնց տարած ամենանվազ աշխատանքն անգամ դրական չի անդրադառնալու Լեռնային Ղարաբաղի հակամարտության մասին հանրության պատկերացումների վրա:**

Ա. Հ.

# Շուրջերկրյա ճանապարհորդությունից հայրենիք վերադարձավ «Մաշտոց» արշավախումբը



Օգոստոսի 19-ին շուրջերկրյա ճանապարհորդությունից հայրենիք վերադարձավ «Մաշտոց» արշավախումբը՝ Զորի Բալայանի գլխավորությամբ:

«Զվարթնոց» միջազգային օդանավակայանում արշավախմբին դիմավորելու էին եկել ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, պաշտոնատար այլ անձինք, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, արշավախմբի անդամների հարազատներ, ընկերներ եւ բազմաթիվ հայրենակիցներ:

2009թ. մայիսի 28-ին Վալենսիայից սկիզբ առած «Մաշտոց» արշավախմբի շուրջերկրյա ճանապարհորդությունն ավարտվեց Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակի նախաշեմին:

Կիպրոսի Լիմասոլ քաղաքի նավահանգստում «Արմենիա» առագաստանավի շուրջերկրյա նավարկության ավարտին նվիրված հանդիսավոր արարողության ժամանակ «Մաշտոց» արշավախմբի ղեկավար Զորի Բալայանը նշել է, որ Սուրբ Մեսրոպ Մաշտոցի անվան գիտարշավի շրջանակներում «Արմենիա» առագաստանավը, մեկնարկելով Միջերկրական ծովի ջրերից, Ջիբրալթարի նեղուցով կտրելանցել է Ատլանտյան, Խաղաղ եւ Հնդկական օվկիանոսները: Գիտարշավի ղեկավարը նշել է, որ անձնակազմի անդամները հինգ մայրցամաքներում, որտեղ դարեր ի վեր ապրել եւ ապրում են միլիոնավոր մեր հայրենակիցները, իրականացրել են իրենց առջեւ դրված բոլոր խնդիրները:

# ՀՅԴ Արեւմտյան Ամերիկայի կենտրոնական կոմիտեն քննադատել է ՀՀ նախագահին

## *Եվ հրաժարվել մասնակցել ի պատիվ վերջինիս լոսանջելեսյան ճաշկերույթին*

ՀՀ անկախության 20-ամյակի առթիվ ՀՀ Լոս Անջելեսի գլխավոր հյուպատոսությունը «Բեւեռլի Հիլթն» հյուրանոցում ի պատիվ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի տոնական հանդիսավոր ճաշկերույթ է կազմակերպելու: ՀՅԴ Արեւմտյան Ամերիկայի կենտրոնական կոմիտեն երեկ խիստ գնահատականներով հայտարարություն է ընդունել՝ մերժելով կազմակերպության մասնակցությունը լոսանջելեսյան ճաշկերույթին:

«Անկախության 20-ամյակի առթիվ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի ներկայությունը, առավել եւս ի պատիվ իրեն կազմակերպած տոնական հանդիսավոր ճաշկերույթը, ստվեր կգցի անկախության գաղափարին եւ կնսեմացնի մեր ժողովրդի արդարության վերականգնման համար մղած պայքարը», ասված է «**Ազգ**»-ին ուղարկված հայտարարության մեջ:

Կոմիտեի գնահատմամբ՝ անկախության տոնակատարությունը չի կարող առիթ հանդիսանալ փառավորելու հեղինակազրկված պաշտոնատարներին, տվյալ դեպքում՝ ՀՀ նախագահին, ում վարած քաղաքականության հետեւանքով քսանամյա անկախ Հայաստանն ամեն օր ավելի ու ավելի է խեղդվում փտախտի տիղմում: Որպեսզի ապահովվի հանգավոր վարչակարգի վերարտադրությունը, ժողովրդավարությունն ու ժողովրդավարական արժեքները շարունակում են ոտնահարվել:

Կոմիտեն բացասական է գնահատում քաղաքացիական հասարակության զարգացման արգելակումը, դատական համակարգի արդարության եւ անկախության բացակայությունը: «Այդ ամենը ներկայիս նախագահի օրոք ստեղծել են բարոյահոգեբանական այնպիսի անառողջ մթնոլորտ, որ խախտվել է հայ մարդու հավատքը պետության եւ պետականության նկատմամբ»: «Չենք կարող փառավորել մի նախագահի, որ Արցախի հիմնահարցի լուծման բանակցությունները վարելու ամուր դիրքերը վաղուց զիջել է եւ բազմիցս հայտարարել ԼՂՀ-ի սահմանադրությամբ ամրագրված տարածքներ զիջելու իր պատրաստակամությունը: Խոր մտահոգությամբ կհետեւենք բանակցային նոր զարգացումներին, որոնք յուրաքանչյուր պահի կարող են տագնապի առջեւ կանգնեցնել հայ ժողովրդին ու վտանգել Արցախի անկախ հանրապետությունն ու ժողովրդի անվտանգությունը: Չենք կարող փառավորել նախագահի, որ Հայաստանը եւ հայ ժողովուրդը տարավ Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ ստորագրված արձանագրությունների նվաստացուցիչ եւ պարտվողական ճանապարհով, ծանր կորուստների առջեւ դնելով մեր ժողովրդին»:

Հայտարարությունը երեկ Երեւանից մեկնաբանել է ՀՅԴ բյուրոյի Հայ դատի եւ քաղաքական հարցերի գրասենյակի պատասխանատու **Կիրո Մանոյանը**:

«Հայտարարությունն արտահայտում է կենտրոնական կոմիտեի դիրքորոշումը եւ թերեւս արդյունք է գաղութում առկա որոշակի տրամադրությունների: Հասկանալի է, որ ՀՀ-ում կուտակվել են բազմաթիվ հիմնահարցեր, առկա են բազմաթիվ չլուծված խնդիրներ: Բայց 20-ամյա տարեդարձը մեր ընդհանուր հաղթանակի եւ ձեռքբերումների ամրագրումն է: Մենք իրավունք չունենք այս մակարդակի միջոցառումներում, անձնավորված հարաբերություններով եւ հուզական քայլերով առաջնորդվելու, այլ առիթը պետք է օգտագործենք՝ մնալով հանդերձ մեր սկզբունքային դիրքերում՝ նման միջոցառումներով արտահայտելու մեր միասնականությունն ու համախմբվածությունը», հայտարարել է Կիրո Մանոյանը:

Հ. Հ.

# Նոր Ջուղայի մասին՝ Հարվարդի համալսարանում

Հարվարդի համալսարանի Մաշտոցի անվան հայկական ուսումնասիրությունների ամբիոնի, մերձավորարեւելյան լեզուների եւ քաղաքակրթությունների բաժնի, ռուսական եւ եվրասիական ուսումնասիրությունների Դեյվիս կենտրոնի, Հարվարդի հայկական ընկերության, Ժամանակակից հայկական ուսումնասիրությունների եւ վավերագրության Զորյան ինստիտուտի, ինչպես նաեւ Հայկական ուսումնասիրությունների եւ հետազոտությունների ազգային ասոցիացիայի (ՆԱԱՍՐ) համատեղ հովանավորությամբ, առաջիկա սեպտեմբերի 14-ին, ըստ ստացված հաղորդագրության, Հարվարդի համալսարանի կառավարման եւ միջազգային ուսումնասիրությունների կենտրոնում տեղի է ունենալու Լոս Անջելեսի Կալիֆոռնիա համալսարանի արդի հայկական պատմության Ռիչարդ Հովհաննիսյանի անվան ամբիոնի նորանշանակ վարիչ, դոկտ. Սեպուհ Ասլանյանի դասախոսությունը «Հնդկաց օվկիանոսից մինչեւ Միջերկրական ծով: Նոր Ջուղայի հայ առեւտրականների ճանապարհորդությունները» թեմայով, հիմնված իր հեղինակած եւ Կալիֆոռնիա համալսարանի հրատարակած նույնանուն գրքի նյութերի վրա:






Գիրքը մեծապես գնահատվել է գրախոսների կողմից: Այոնա քոլեջի դասախոսներից պրոֆ. Ջորջ Բուռնությանը «Եզակի եւ լավագույնս ուսումնասիրված աշխատություն» է որակել, որը «գերազանցում է Նոր Ջուղայի հայ առեւտրականների մասին նախօրոք գրված բոլոր հրատարակությունները»: Գիրքը նաեւ «Կալիֆոռնիայի համաշխարհային պատմության գրադարանի» կողմից ընտրվել է, որ վերահրատարակվի որպես առաջին գիրքը իրենց նոր մատենաշարի, որին տվել են «Հեղինակային դրոշմ» անունը: Այդ մատենաշարում նախատեսում են հրատարակել աչքի ընկնող գիտնականների առաջին գրքերը:

Դոկտ. Ասլանյանը իր դոկտորականը գերազանցությամբ պաշտպանել է Կոլումբիա համալսարանում 2007-ին: Համաշխարհային եւ հայկական արդի պատմության վաղ շրջանի մասնագետ է: Նախկինում դասավանդել է Կոռնելի եւ Լոնգ Բիչի համալսարաններում: Հեղինակ է բազմաթիվ հոդվածների, որոնք հրատարակվել են «Journal of World History», «Journal of the Social and Economic History of the Orient» եւ այլ պարբերականներում:

Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ

# Ներկայացվել է Վանաձոր-Ֆիոլետովո երկաթգծի ընտրված տարբերակը

Ինչպես տեղեկացանք տրանսպորտի եւ կապի նախարարությունից, նախարար Մանուկ Վարդանյանը երեկ ընդունել է Վանաձոր-Ֆիոլետովո երկաթգծի կառուցման նախագծային աշխատանքներն իրականացնող «Սիբգիպրոտրանս» եւ «Հարավկովկասյան երկաթուղիներ» ընկերությունների ներկայացուցիչներին: Վերջիններս ներկայացրել են Վանաձոր-Ֆիոլետովո երկաթգծի կառուցման հինգ տարբերակներից ընտրված նախագիծը, որի ընդունումից հետո կսկսվեն տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրության աշխատանքները: Մանուկ Վարդանյանը ընկերության ներկայացուցիչներին հանձնարարել է նաեւ 10-օրյա ժամկետում ներկայացնել ընտրված տարբերակի հիմնավորումները:

Ա. Մ.

60-ԱՄՅԱԿ

# Շնորհավո՜ր հոբելյանդ, Վեհափա՛ռ Տեր

*1-ին էջից*

**Դրանում համոզվելու համար բավական է հայացք նետել մեր եկեղեցական բազմամարդ տոներին, մկրտություններին ու այլ՝ վերադարձող խորհուրդների կատարմանը, ականատես լինել մեր հասարակայնության դարձին դեպի Մայր եկեղեցին: Չմոռանանք եկեղեցու պատմության ու կրոնագիտության դասավանդման ներդրումը հանրակրթական դպրոցում, դասագրքերի կազմումն ու հրատարակումը, ուսուցիչների պատրաստումն ու վերապատրաստումը:**



**Պետական անաստվածության տասնամյակներին սոսկալի հետեւանքներից, նախ եւ առաջ, կրթված քահանաների, այլ հոգեւորականների պակասն է», կրկնում է Վեհափառ հայրապետը: Դրա համար նա ոչ միայն զարգացնում է Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի Գեւորգյան ճեմարանը, որը պետության կողմից ճանաչվել է աստվածաբանական համալսարան, այլեւ աներեւակայելի ջանքեր է գործադրում ու միջոցներ ներդնում իր նախաձեռնությամբ ստեղծված Սեւանի Վազգենյան դպրանոցը, քահանայական դասընթացները կայացնելու, շնորհալի երիտասարդներ եկեղեցական ծառայության կոչելու նպատակով (շատ երիտասարդ հոգեւորականներ մեկնում են կրթություն ստանալու արտերկրի աստվածաբանական հեղինակավոր կենտրոններ):**



**Բոլոր արժեքների ու հեղինակությունների համընդհանուր անկման փոթորկալի ու հակասական ժամանակներում մեր Մայր եկեղեցին ու նրա առաջնորդն այն լուսատու ու փրկիչ փարոսն են, որ օգնում են մեզ կուլ չգնալու գլոբալիզացիայի աղետաբեր օվկիանոսում: Այսօր, երբ ժողովրդավարության, հումանիզմի ու եվրոպականության շղարշի տակ Հայաստանը հեղեղում են տարաբնույթ աղանդավորական եւ նմանատիպ այլ կառույցները, երբ մարդասիրական օգնության ու քաղցր-մաղցր ճամարտակությունների ներքո քողարկվում է ամենապարզ հոգեորսությունը, հենց Վեհափառն է բոլորից լավ պատկերացնում ու տեսնում այն օրախնդիր հարցերը, սպառնալիքներն ու մարտահրավերները, որ ծառացած են մեր եկեղեցու ու ժողովրդի առջեւ, նախաձեռնում դրանց հաղթահարման արդյունավետ ուղիները:**

**Սուրբ Մեսրոպ Մաշտոցի շքանշանի, շատ երկրների ամենաբարձր պետական պարգեւների ասպետ, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի պատվավոր անդամ, Երեւանի պետական համալսարանի պատվավոր դոկտոր Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը մեր ժամանակների ամենավառ, ամենաերեւելի անհատականություններից է:**

**Վերջապես, Վեհափառը Մարդ է. բարի, ուշադիր, հոգատար, ջերմ, զգայուն (տարբեր տարիներ մոտիկից դիտարկելով նրան՝ համարձակ կարող եմ վկայել այս ամենի մասին):**

**Այս առումով առավել անհիմն են եւ անարդար առանձին սանձարձակ հայտարարությունները մեր եկեղեցու եւ նրա գլուխ կաթողիկոսի հասցեին, որ նկատվում են վերջին շրջանում: «Որտեղ կա հավատք, կասկած լինել չի՛ կարող», Վեհափառ հայրապետի այս խոսքերը, վստահ ենք, պիտի կողմնորոշիչ հանդիսանան բոլորիս համար:**

**Նշանավոր այս օրը մաղթենք մեր հոգեւոր առաջնորդին՝ մեր սիրելի Վեհափառին քաջառողջություն, արեւշատություն, ամենազոր Աստծո օրհնություն եւ հովանավորություն, անսպառ կորով ու եռանդ մեր ժողովրդին ու եկեղեցուն տասնամյակներ շարունակ առաջնորդելու գործում:**

**Շնորհավոր հոբելյանդ, Վեհափա՛ռ Տեր:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
/ հեռ 529353

Համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Գորբաչովը կֆինանսավորի հելիոսարքերի արտադրությունը Հայաստանում

## *Հայաստանի հելիոֆիկացիայի ծրագրի ղեկավար Վահան Համազասպյանը դժգոհ է մեր կառավարության մոտեցումից*

Հայաստանի հելիոֆիկացիայի ծրագրի ղեկավար **Վահան Համազասպյանը** եւ Այլընտրանքային էներգետիկայի ինստիտուտի տնօրեն **Սամվել Թադեւոսյանը** երեկ հրավիրած մամուլի ասուլիսի ընթացքում խիստ կարեւոր համարեցին Հայաստանում արեւային էներգետիկայի զարգացումը մի քանի առումներով:

Ըստ Վահան Համազասպյանի, Հայաստանը պետք է ստեղծի հելիոֆիկացիայի արդյունաբերություն, որը կբարձրացնի մեր երկրի էներգետիկ անվտանգությունը եւ կապահովի նոր աշխատատեղերով: Սակայն Հայաստանի կառավարությունը «շատ վատ է» վերաբերվում այս ճյուղին, այդ պատճառով էլ ծրագրի ղեկավարը շատ դժգոհ է: Նա նաեւ իր դժգոհությունը հայտնեց Ազգային անվտանգության խորհրդից, որը տարածել է էներգետիկ անվտանգության մասին հայտարարություն, որտեղ ոչ մի խոսք չկա հելիոֆիկացիայի մասին: Գիտնականը դժգոհ էր Ազգային ժողովից եւս, քանի որ ինքն առաջարկել էր լսումներ կազմակերպել այս հարցով, բայց դա տեղի չի ունեցել: «ՀԱԿ-ի հետ ջուր ծեծելու ժամանակ գտնում են, բայց այսպիսի կարեւոր հարցի համար ժամանակ չեն գտնում», իր վրդովմունքը հայտնեց Վահան Համազասպյանը:

Նա տեղեկացրեց, որ Խորհրդային Միության նախկին նախագահ Միխայիլ Գորբաչովի ստեղծած «Կանաչ խաչ» հիմնադրամը պատրաստակամություն է հայտնել ֆինանսավորելու այս ծրագիրը, որի վերաբերյալ պայմանավորվածություն է ձեռք բերել գիտնականի գործընկեր Նորայր Մուրադյանը: Ակադեմիկոս Աբել Աղանբեգյանը նույնպես կոչ է արել Հայաստանի նախագահին՝ ուշադրություն դարձնել հելիոֆիկացիայի ծրագրին:

Հելիոսարքերի արտադրության գործարանը նախատեսվում է բացել Սպիտակի նախկին վերելակաշինական գործարանի շենքում, որի համար կպահանջի մոտ 8 մլն դոլարի ներդրում: Ըստ Վահան Համազասպյանի՝ նախատեսվում է օրական արտադրել 1000 կոմպլեկս 5 կվտ հզորության սարքեր, որի արժեքը կլինի 400-600 դոլարի մոտ: Դա աշխարհի ամենաէժան գինն է արեւային էներգիայի օգտագործման դեպքում: Գիտնականը վստահ է, որ Հայաստանի 350 հազար գյուղացիական տնտեսությունների պահանջարկը գործարանը կարող է բավարարել: Իսկ այդ հելիոսարքերի արտադրած էներգիան կլինի շատ էժան՝ 0,2 լումա: Վահան Համազասպյանը հույս հայտնեց, որ այս տարվա վերջին կսկսվի հելիոսարքերի սերիական արտադրությունը Հայաստանում:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Շուշիում ավարտվեց սկաուտական երկրորդ բանակումը

Հիմնադրվելով 1907թ.՝ սկաուտական շարժումն Անգլիայից աստիճանաբար տարածվեց Եվրոպա՝ հասնելով Հայաստան: Այն ՀՀ-ում նոր փուլ մտավ 1991 թվականին: Որպես շարժում՝ ԼՂՀ-ում այն կայացավ 2010թ. «Հայկի Սերունդ» ԵՀԿ-ի կողմից, որն օրհնեց Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը: Ու եթե տարբեր երկրներում շարժումը կրում է զուտ հասարակական բնույթ՝ հենվելով այս կամ այն կազմակերպությունների վրա, ապա Արցախում այն պետական աջակցություն է ստանում: Ոչ պաշտոնական տվյալներով՝ աշխարհում կա շուրջ 60 հազար հայ սկաուտ, իսկ Արցախում գրանցված են շուրջ 300-ը:



«Հայկի Սերունդ» ԵՀԿ սկաուտների առաջին բանակումը իրականացավ 2010թ. օգոստոսի 3-ին Շուշիում ՝ «Ուղին ճշմարիտ է, եթե Հայրենիք է տանում» կարգախոսով:

Մանկապատանեկան եւ երիտասարդական այս շարժման նպատակն է պատասխանատու եւ ինքնագիտակից, հասարակայնորեն ակտիվ եւ հոգեպես ամուր, հայրենասեր եւ ազատասեր սերնդի պատրաստումը, որի անհրաժեշտությունը ազատագրված Արցախն ամենաշատն է զգում:

Մեկ տարվա գործունեության ընթացքում Արցախի սկաուտները համագործակցության ամուր կապեր են հաստատել ՀՀ-ում եւ Իրանում գործող սկաուտական խմբերի հետ:

2011-ի օգոստոսի 9-13-ը, Շուշի քաղաքում «Հայկի Սերունդ» երիտասարդական հասարակական կազմակերպությունը կազմակերպեց «Հայորդիներ» համահայկական սկաուտական 2-րդ բանակումը, որին մասնակցում էին 120 դպրոցականներ եւ երիտասարդներ Ստեփանակերտից ու ԼՂՀ շրջաններից, ինչպես նաեւ հյուրեր՝ ՀՀ-ից (ՀԲԸՄ, Համաշխարհային հայկական կոնգրեսի երիտասարդական կազմակերպությունների ասոցիացիա), Իրանի հայ համայնքից:

Բանակումի ընթացքում կազմակերպվեցին զանազան խաղեր, մրցույթներ, արշավներ, սկաուտական շարժման պատմության վերաբերյալ դասախոսություններ. մասնակիցները հաղթահարեցին բազում փորձություններ:

Օգոստոսի 13-ին տեղի ունեցավ բանակումի փակման արարողությունը, որին ներկա էին ծնողներ, հյուրեր: Արարողության ընթացքում՝ մի շարք սկաուտներ պարգեւատրվեցին «Հայկի Սերունդ» ԵՀԿ-ի պատվոգրերով, իսկ հյուրերը՝ շնորհակալագրերով:

«Հայկի Սերունդ» ԵՀԿ սկաուտական բաժանմունքը կշարունակի իր աշխատանքները՝ սկաուտական խմբերի հետ, նրանց պատրաստելով հաջորդ բանակումին:

«Հայկի Սերունդ» ԵՀԿ վարչություն

# Կրպակատերերը Երեւանի ավագանու արտահերթ նիստի պահանջ են ներկայացրել

Մի շարք կրպակատերեր, որոնց կրպակները քաղաքապետարանի որոշմամբ ապամոնտաժվել են, երեկ այցելել են Երեւանի քաղաքապետարան եւ ավագանու բոլոր անդամներին հասցեագրված 52 նամակ հանձնել: Նրանք պահանջում են Երեւանի վարչական շրջանների կրպակների ապամոնտաժման հարցը քննարկելու նպատակով հանդես գալ Երեւան քաղաքի ավագանու արտահերթ նիստ հրավիրելու նախաձեռնությամբ, արտահերթ նիստի օրակարգի հարց ընդգրկել հողի վարձակալության պայմանագրերը երկարացնելն ու կրպակների փաստաթղթերը լիարժեք դարձնելը, դադարեցնել ապամոնտաժման գործընթացը եւ ապահովել ավագանու արտահերթ նիստում իրենց ներկայացուցիչների մասնակցությունն ու զեկույցի ներառումը:

Հիշեցնենք, որ «Ժառանգության» խմբակցության անդամներն էլ կրպակատերերի խնդրով նամակով դիմել էին ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանին՝ առաջարկելով արտահերթ նիստ հրավիրել:

Երեւանի քաղաքապետ Կարեն Կարապետյանի որոշմամբ ապամոնտաժվելու են մայրաքաղաքում գործող անօրինական, չգործող, ժամկետանց պայմանագրերով գործող եւ քաղաքաշինական չափորոշիչներին չհամապատասխանող կրպակները: Քաղաքապետարանի տվյալներով՝ ապամոնտաժվող կրպակների թիվը մի քանի հազար է: Արդեն ապամոնտաժվել են 1200 «չգործող կամ իրավական թերի հիմքերի վրա գործող կրպակներ»: Քաղաքապետի վերոնշյալ որոշումը հասարակական դժգոհության տեղիք է տվել, որովհետեւ մայրաքաղաքի գլխավոր կառավարիչը առանց սոցիալական խնդիրները հաշվի առնելու, առանց ժամկետներ նշանակելու ապամոնտաժել է կրպակներն ու այլընտրանքային այլ տարբերակ չի առաջարկել:

Հ. Հ.

ԱՍՈՒԼԻՍ

# «Ով ինձ մեղադրում է, հիվանդ է», սկզբունքի տեսություն

**Golden Palace հյուրանոցում օրեր առաջ տեղի ունեցած ՀՌԱԿ 19-րդ արտահերթ պատգամավորական խորհրդի որոշմամբ կուսակցության նոր ատենապետ ընտրված Հարություն Առաքելյանը երեկ «Հայացք» մամուլի ակումբում պատասխան ասուլիս էր հրավիրել: Ինչո՞ւ պատասխան, որովհետեւ նախօրեին մեկ այլ ակումբում բանախոսում էր կուսակցության վերոհիշյալ համագումարի որոշմամբ ՀՌԱԿ-ից վտարված ատենապետ Էդվարդ Անտինյանը, որը, ինչպես երեկվա համարում գրել էր «Ազգը», իրավական կոպտագույն խախտումներով տեղի ունեցած որակելով ՀՌԱԿ համագումարը, անձնական մեղադրանքներ էր հասցեագրել Հարություն Առաքելյանին: Բացի սրանից՝ վերջինիս երեկվա ասուլիսը պատասխան էր նաեւ «Ազգ» օրաթերթին, որի գլխավոր խմբագիր Հակոբ Ավետիքյանը, Առաքելյանի խոսքերով, «վրեժ է լուծում իրենից»:**

**«Վոբշեմ», ինչպես հաճախ գործածում էր Առաքելյանը ասուլիսի ընթացքում, ամեն ինչի մասին՝ հերթով:**

**Նախ Առաքելյանը, որին դժվար է անվանել ՀՌԱԿ-ի նոր ատենապետ, քանի որ արդարադատության նախարարությունում կուսակցության ատենապետ է դեռեւս համարվում Անտինյանը, նշեց. «ՀՌԱԿ-ի շուրջը վերջին օրերի այս աժիոտաժը արհեստական է: Արտառոց ոչինչ տեղի չի ունեցել. կուսակցության կանոնադրության համաձայն՝ տեղի են ունեցել ընտրություններ, որոնց արդյունքում ես ընտրվել եմ կուսակցության ատենապետ»: Անշուշտ, երբ որեւէ կուսակցության կանոնադրության համաձայն տեղի են ունենում կուսակցական համագումարներ, ընտրություններ, արդյունքում՝ նոր ատենապետներ, որեւէ արտառոց բան տեղի չի ունենում, սակայն արտառոց չէ՞ արդյոք փաստը, որ գրեթե մեկ շաբաթ առաջ տեղի ունեցած ՀՌԱԿ վերոհիշյալ համագումարում ընտրված նոր ատենապետի անունը դեռեւս «չգիտեն» արդարադատության նախարարությունում. միգուցե հետաքննելու հիմք կա, ո՞վ գիտի...**

**Սրանից հետո Առաքելյանը ներկայացրեց մի փաստաթուղթ, որտեղ, իր խոսքերով, ապացուցվում է, որ ամիսներ առաջ Էդվարդ Անտինյանը կուսակցության համագումարում ընտրությունների արդյունքում ընտրվել է կուսակցության ատենապետ: Իսկ ո՞վ է վիճարկում այդ փաստը... «Այո, ես անձամբ եմ նրան (նկատի ունի՝ Անտինյանին-Հ. Ա.) առաջադրել ՀՌԱԿ-ի ատենապետի պաշտոնում, եւ համագումարը համաձայնել է», նշեց Առաքելյանը: Փաստորեն, եթե հավատանք Առաքելյանի խոսքերին, ապա նախօրեի ասուլիսում «այնքան էլ» չէր սխալվում Անտինյանը՝ ասելով. «Ես սարսափ եմ ապրում, երբ հիշում եմ, թե ինչպես էր Առաքելյանն ինձ աղերսում դառնալ ատենապետ». այս երկու հայտարարություններում տարբերություն կա իհարկե, սակայն՝ «չնչին»: Այս ամենից հետո արդեն Առաքելյանը, կարելի է ասել, սկսում է «իսկական ասուլիսը»՝ «ով ինձ մեղադրում է, հիվանդ է» սկզբունքով: «Ես մինչեւ օրս չեմ հասկանում Անտինյանի խոսքերի տրամաբանությունը: Ատենապետության 8 ամիսների ընթացքում տղան զբաղված էր միայն հարցազրույցներ տալով: Սկզբում նա խոստանում էր, որ թերթ կբացենք, գրասենյակներ եւ այլն, ոչինչ չբացվեց: Ինչ վերաբերում է ինձ հասցեագրված մեղադրանքներին ու վիրավորանքներին, ապա ես դրանց պատասխանելու ցանկություն չունեմ, չնայած նրան հասնում է պատասխանել»: Ու չնայած Առաքելյանը, իր իսկ խոսքերով, ցանկություն չուներ պատասխանելու իրեն հասցեագրված վիրավորանքներին, այդուհանդերձ Անտինյանին որակեց «ուղեղի հետ խնդիրներ ունեցող», «անմեղսունակ», «որին դատի տալ անգամ չարժե»...: «Անտինյանը մինչեւ մեր համագումարը ասում էր, որ այն օրենքից դուրս է, սակայն, համագումարից հետո նույն Անտինյանը հայտարարում է, թե իրեն համագումարին մասնակցելու հրավեր ոչ ոք չի ուղարկել: Չի՞ նշանակում սա, որ մարդն ուղղակի իր տեղում չէր, ի՞նչ ատենապետ ես, որ պետք է քեզ հրավիրեն քո իսկ կուսակցության համագումարին», նշեց Առաքելյանը: Փաստորեն, երբ որեւէ կազմակերպությունում, ընկերությունում, կուսակցությունում որեւէ մի խումբ ինչ-որ մեկի նախաձեռնությամբ առանձին հավաք է կազմակերպում, դա նշանակում է, որ տվյալ կազմակերպության ղեկավարը «ի՞նչ ղեկավար է, որ...»:**

**Առաքելյանն անդրադարձավ նաեւ համագումարի անցկացման վայրի փոփոխության հարցին: Հիշեցնենք՝ նախօրոք Աղվերանում հայտարարված ՀՌԱԿ համագումարը հանկարծ կայացավ Երեւանում: «Պարզվում» է խնդիրը եղել է տեխնիկական բնույթի. «Առավոտյան պարզեցինք, որ ավտոբուսներից մեկը փչացել է, շատ որոշում կայացրինք համագումարն անցկացնել Երեւանում», «արդարացավ» Առաքելյանը: Ի՞նչ է ստացվում. պատկերացրեք դուք կազմակերպում եք միջոցառում եւ հրավիրում 500 հոգու կոնկրետ վայր: Միջոցառման նույն օրը դուք ունենում եք «տեխնիկական» խնդիրներ եւ «շատ կարգով» փոխում միջոցառման վայրը, փոխանակ ավտոբուսը փոխելու եւ կամ՝ չարժե՞ր այդ մասին տեղյակ պահել բոլոր հրավիրյալներին՝ անխտիր... «Նույնիսկ լրագրողներ են եղել մեր համագումարին, օրինակ, «Երկիր» օրաթերթի լրագրողը», նշեց Առաքելյանը՝ թերեւս «ապացուցելով», որ «բոլորն էլ ամեն բան իմացել են»:**

**Այժմ՝ «վրիժառության մասին»: «Պարզվում է», որ «Ազգ» օրաթերթը՝ ի դեմս Հակոբ Ավետիքյանի, պարզապես վրեժ է լուծում Առաքելյանից ՀՌԱԿ-ում տիրող իրավիճակը լուսաբանող վերջին հրապարակումների շարքով: «Դե «Ազգ»-ի գլխավոր խմբագիրը մեծ մարդ է, հավանաբար առողջության հետ կապված խնդիրներ ունի, եւ մենք այդ ամենը լուրջ չենք ընդունում: Իմ կուսակցական ընկերները խորհուրդ են տալիս ինձ՝ դատի տալ «Ազգ»-ին, սակայն ես երկար տարիներ աշխատել եմ այդ կոլեկտիվում, հուսամ՝ ստիպված չեմ լինի դիմելու այդ քայլին»: Սրանից բացի՝ Առաքելյանը նշեց, որ մեր թերթի՝ «իր դեմ տարվող արշավը» նոր չէ. «Ավետիքյանը գողացավ թերթը, վաճառեց, հիմա էլ ինձանից վրեժ է լուծում», ասաց Առաքելյանը: Նախ՝ «Ազգ» օրաթերթը չի պատկանել ո՛չ ՀՌԱԿ-ին, ո՛չ մանավանդ Առաքելյանին, հետեւաբար՝ այն ոչ մեկից չեն գողացել: Բացի սրանից՝ մեր թերթը որեւէ մեկի նկատմամբ «արշավ ձեռնարկելուց» շատ ավելի կարեւոր հետաքրքրություններ ունի, հետո՝ այդ ինչպե՞ս մեր ասածները ՀՌԱԿ-ում «լուրջ չեն ընդունվում», երբ Առաքելյանն ինքը խոստովանում է, որ իր ընկերները առաջարկում են դատի տալ «Ազգ»-ին, այդ պարագայում ինչո՞ւ, «անլուրջ հիմքի վրա՞». հիմա, փաստորեն, ո՞ւմ ասածը ավելի լուրջ ստացվեց: Իսկ Առաքելյանի՝ մեր թերթում աշխատած երկար տարիների հետ կապված, բավական հետաքրքրական «հուշեր» կան զետեղված՝ «Ի պաշտպանություն Հարություն Առաքելյանի» մի քանի էջանոց հայտարարությունում, որը տարածվեց երեկ ասուլիսին ներկա լրագրողներիս շրջանում (փաստորեն եւ «լուրջ չեն ընդունում», եւ կարիք են զգում՝ «պաշտպանելու»-Հ. Ա.): Ամենազավեշտալին այն է, որ «հուշագիրը հիշում է» թե ինչպես «Ազգ»-ի համար այն «երանելի տարիներին, երբ ընկեր Առաքելյանը թերթի տնօրենն էր, իր աշխատասենյակի դիմաց խաղատների սեփականատերերը հերթ էին կանգնում եւ հազարավոր դոլարներ մուծում՝ միայն թե «Ազգ»-ում տպագրված տեսնեն իրենց գովազդը»: Քանի՞ ապատեղեկատվություն միայն այս մեկ նախադասության մեջ. չանդրադառնանք «հերթին», որը երբեք չի եղել, միայն նկատենք՝ ինչպես կարո՞ղ էր եւ է Հայաստանում գովազդատուն գովազդի համար վճարել դոլարով, այն էլ՝ բազմահազար, այն էլ՝ տպագիր թերթին... Իսկ եթե իրոք «հազարավոր դոլլարներ» են մուծել «խաղատների սեփականատերերը» Հ. Առաքելյանին, ապա նշանակում է, որ վերջինս դրանք գրպանել է...**

**Եվ վերջում, Առաքելյանի խոսքերով, ՀՌԱԿ-ը գալիք ընտրություններին հավանաբար գնա դաշինքով. «Հնարավոր եմ համարում, որ գնանք ՀՅԴ-ի, «Ժառանգության», ժողովրդական կուսակցության եւ որոշ այլ ուժերի հետ», ասաց Առաքելյանը, ընդգծելով, որ, անշուշտ, միայն իր կողմից սա հնարավոր համարելը «շատ քիչ է»:**

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# Իրական ուտեստներ՝ զավեշտ թվեր

## *Ուտեստների աճին զուգահեռ դեղատներն էլ են շատանում*

Հարգելի ընթերցող. երբ ձեզ՝ պարզ ու հասարակ ՀՀ քաղաքացուն ինչ-որ մեկը, լինի համայնավար, ընդդիմադիր թե «աբիժնիկ», փորձի համոզել, որ մեր ընդհանրական, 3 մլն հայաստանաբնակների կենցաղում տարիներ շարունակ դրական փոփոխություններ տեղի չեն ունեցել, նման խոսքերին մի հավատացեք: Չէ՞ որ դուք էլ հիմնավոր առարկություն չունեք, որ փողոցներում շքեղ ավտոմեքենաները շատացել են, էլիտար բնակարաններով շենքերն ավելացել, ռեստորանային տեղերը բազմապատկվել ու նման բաներ: Մի բուռ ժողովուրդ ենք, չարժե հիշել, որ այս ամենը նույն մարդկանց շրջապատի արդյունք է, այսպես ասած՝ 40 ընտանիքների գործն, պարզ ու հասարակ որակվող ՀՀ քաղաքացին այստեղ պարզապես չկա, քանզի նրա ցանկություններն ու հնարավորությունները միմյանցից շատ են հեռու:

Այսուհանդերձ որոշակի թվերի ծանոթությունը հույս է արթնացնում, որ պարզ ու հասարակներիս կենցաղում էլ են տեսանելի փոփոխություններ արձանագրվել, անշուշտ դրական առումով: Խնդրեմ, կոնկրետ փաստի ծանոթացեք. ասենք, 2005 թվականին մեզնից յուրաքանչյուրը տարվա ընթացքում միջին հաշվով երշիկեղեն սպառել է 400 գրամ: Չէ, մի խառնվեք, չեղավ, ի՞նչ առնվազն 4-5 կիլոգրամ, կամ միայն նրբերշիկ նվազագույնը 6-7 կիլոգրամ: Այդ ում ինչ եք փորձում համոզել: Երշիկեղենի արտադրության կազմակերպիչները աշխարհի զարգացած երկրներից թանկարժեք տեխնիկա են ներմուծում, ժամանակակից տեխնոլոգիաներ ներդնում ու մեր մարդկանց գերորակյալ արտադրանքով ապահովում, որը երախտամոռ հայաստանցիներս չենք գնում ու վայելում, որպեսզի իրենք էլ ավելի ընդլայնեն սեփական արտադրությունները: Արտերկրում մսատեսակներ ինչքան ուզեք, ներմուծվող 1 կիլոգրամի արժեքը՝ գրեթե 1 դոլար, կարեւորը՝ երշիկեղեն գովազդելիս որակյալ մսի մասին հիշեցնելն է, էական չէ՝ հնդկական է, թե այլ երկրից ձեռք բերված, ինչպես պահպանված ու տեղափոխված: Գործարարներն ինչ փորձություններ ասես չեն հաղթահարում, անգամ Սոմալիի ու Սուդանի ծովահենների հետ են գործ ունենում, գիշերով ու ալեկոծվող ծովերում նավարկում, երբ մենք, պարզ ու հասարակներս հայրենական նույնպես պարզ երկնքի տակ մեր անհոգ օրն ենք անցկացնում: Տարվա ընթացքում 400 գրամ երշիկեղենն ի՞նչ է, որ դրա սպառումը չենք ավելացնում: Ավելացնում ենք, հարգելիներս, չե՞ք հավատում՝ թվերին ծանոթացեք. 2009-ին մոտ 3 անգամ ավելի ենք կերել, քան 2005-ին՝ 1181 տոննայի դիմաց ամբողջ 3272 տոննա: Մեկ ընտանիքի կամ ձեր բնակության վայրի բնակչության սպառածի հետ չշփոթեք, սա 3 մլն հայաստանցիներիս կերածն է, քանզի 2010-ին այս ապրանքից ոչինչ չի մնացել: Պատկերացնո՞ւմ եք, 2,5 անգամ ավելացրել ենք երշիկեղեն ուտելը, տարվա ընթացքում յուրաքանչյուրս հասցրել 1 կիլոգրամի: Վերջ տվեք ձեր անձնական կարծիքը հայտնելուն, ինչ կիլոգրամներ, ընդամենը 1 կգ: Տարիներ շարունակ այս թվերի հետ աշխատողներին է պետք հավատալ, ովքեր հաշվում են ամենայն բարեխղճությամբ ու բծախնդրությամբ. հենց 3272 տոննա եւ ոչ մի գրամ ավելի: Բոլորովին տեղին չէ ՀՍՍՀ վիճակագրությունը հիշել, 30 հզ. տոննայի հասնող երշիկեղենի արտադրությունը մտաբերել: Ընդամենը քանի անուն երշիկ կարող եք թվարկել. բժշկական, 2-րդը՝ բժշկական, հաջորդը՝ էլի բժշկական: Իսկ հիմա 10, գուցե 20-30 տեսակի երշիկեղեն են մարդիկ թողարկում, ամբողջ 3272 տոննա. ինչ ամեն ամիս, ողջ տարում՝ 365 օրերին, յուրաքանչյուրիս օրը 3 գրամ չափաբաժնով: Թե ի՞նչ ծավալ է սա, հարցրեք որեւէ մեկի, ով, ասենք, մատանի է կրում եւ դրա քաշը հաստատ գիտի:

Այս թիվը կասկածի տակ դնողներին խորհուրդս է հետագա ընթերցումը դադարեցնել, քանզի նշելու ենք առավել հետաքրքրաշարժ, ցանկանում էի այլ որակում նշել, վիճակագրություն: 2006 թվականին 3 մլն հայաստանցիներս սպառել ենք 3 հզ. տոննա հայրենական արտադրության մակարոնեղեն, միջին հայաստանցին՝ 1 կգ: Հետագա 3 տարիների մեր կյանքում արձանագրված դրական փոփոխություններով, արդեն նշված երշիկեղենի 2,5-ապատիկ աճը ապացույց, մակարոնեղենի սպառումը նվազել է, կազմել 2432 տոննա, յուրաքանչյուր ընտանիքի տարվա բաժինը՝ մոտ 4 կգ: Ամիսն այդչափ օգտագործելու ձեր փաստարկը մի կողմ թողեք, քանզի ոչ այս սննդատեսակը արտադրողները, ոչ հաշվառելու կոչված մասնագետ պաշտոնյաները, ի դեպ, կոչումներով ու անգամ արտերկրներում ուսանած, հայ հանրության համար են օրնիբուն տքնում, նրանից թաքցնելու ոչինչ չունեն, ճիշտ ու ճիշտ 2432 տոննա, որը ձեզ նեղություն չտալու նպատակով օրական բաժին կազմող չափաքանակով ներկայացնեմ... 2 գրամ: ՀՍՍՀ վերջին տարիների այս սննդի արտադրածավալը հիշենք՝ 15 հզ. տոննա: Ինչքա՞ն են ճիշտ հայրենական արտադրողները, երբ նշում են որ իրենց արտադրածը թողած մենք, հիշեցնեմ՝ պարզ ու հասարակ ՀՀ քաղաքացիներս, արտերկրներից ներմուծվածն ենք նախընտրում, քանզի վստահից առավել համոզված ենք որ թանկից էժանը չկա: Ճաշակին ընկեր չկա ասենք ու միաժամանակ օրը յուրաքանչյուրիս բաժին հասնող 2 գրամ հայրենական արտադրության մակարոնեղենն էլ զավեշտի ոլորտից համարենք: Մեր գործարարներն իրենց իսկ արտադրություններում ոսկու ծավալներին համարժեք սնունդ են պատրաստում, պաշտոնյաներն այս ամենը լավ տեսնում ու նրանց արտադրանքը ոսկե մեդալներով են գնահատում: Իսկ թե ինչու են մեզանում դեղատներն ավելանում, ոչ ոք չգիտի, քանզի գիտենալու պարզ ցանկություն իսկ չկա:

Ամառվա այս տապին միրգն ու բանջարեղենը թողած երշիկ-մակարոնեղենից խոսեցինք մի պարզ պատճառով. առաջիններն անցողիկ են, մեր կենցաղում մի կարճ շրջան հանդիպող, երկրորդները՝ սեղանի ամենօրյա ուտեստներ:

**ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ**

# Ինչպես զատել գնաճը

**Հայաստանի Հանրապետությունում տնտեսական քաղաքականության վարման եւ նրա կատարելագործման մասին բազմիցս է խոսվում, որ վաղուց ունի, հատկապես հարկային քաղաքականության մասով, անհապաղ վերանայման կարիք: Ներկայիս գործող հարկային քաղաքականությունը, հատկապես ավելացված հարկի (ԱԱՀ) մասով, չի նպաստում բիզնես ոլորտի զարգացմանը: Այն որպես անուղղակի հարկ, իր ամբողջ մեծությամբ ծանրացած է սպառողների վրա:**

**2011 թ. համար նախատեսված 650 միլիարդ դրամ հարկային մուտքերի 50 տոկոսը պետք է ապահովվի ԱԱՀ հաշվին: Ընդհանուր առմամբ մեր երկրում անուղղակի հարկերի՝ ԱԱՀ, ակցիզային հարկ եւ մաքսային տուրքեր, գանձումների հաշվին ապահովվում է բյուջեի եկամուտների մինչեւ 65 տոկոսը:**

**Համեմատական կարգով ասենք, որ զարգացած երկրներում պետ. բյուջեի եկամուտների 80-85 տոկոսը ապահովվում է ուղղակի հարկերի հաշվին:**

**2010 թ. ընթացքում մեր երկրում արդյունաբերական արտադրության բաժինը ներքին համախառն արդյունքում կազմել է ընդամենը 23,5 տոկոս, որը 1988 թ. արդյունաբերական արտադրության համեմատությամբ կրճատվել է 7,5 անգամ: Ներքին համախառն արդյունքը 2010 թ. 6 տոկոսով ավելի պակաս է, քան 2007 թ.:**

**Այս ամենը խոսում է այն մասին, որ վաղուց անհրաժեշտություն է զգացվում արմատապես փոխելու ինչպես տնտեսական, այնպես էլ հարկային քաղաքականությունը:**

**Դեռ 2011 թ. մարտի 12-ին հանրապետության նախագահը հրավիրած խորհրդակցության ժամանակ հայտարարեց, որ կգա ժամանակ, որ մենք արմատապես կփոխենք մեր հարկային քաղաքականությունը: Ինչպես նաեւ խնդիր դրեց կառավարության առջեւ առաջիկա 2 ամիսների ընթացքում մշակել եւ կիրառել այնպիսի մեխանիզմներ, որոնք կնպաստեն գների զգալի իջեցմանը:**

**Հարկային դաշտում առանց փոփոխությունների, Հայաստանի կառավարության կողմից ձեռնարկվող արդյունաբերության խթանմանն ուղղված բոլոր ջանքերն ապարդյուն են, եթե այդ ջանքերը ամրագրված չեն հարկային օրենսդրության փոփոխմամբ: Այս առումով հատկապես սուր է ԱԱՀ-ն փոխելու կամ կատարելագործելու հարցը, որի պատճառով տուժում է ոչ միայն ներքին շուկան, այլեւ հարվածի տակ են արտաքին շուկայում մրցունակ արտադրանք արտադրող այն ձեռնարկությունները, որոնք զբաղվում են արտահանմամբ: Պատահական չէ, որ ձեռներեցությամբ զբաղվող որոշ ընկերություններում ԱԱՀ-ն համարում են որպես «կոռուպցիոն» հարկ:**

**Ստացվում է այնպես, որ ԱԱՀ-ի անկատար լինելու պատճառով շատ ձեռներեցների մղում է հանցավոր ֆայլերի (գործել ստվերում) եւ ԱԱՀ-ն փոխելու կամ կատարելագործելու դեպքում բիզնեսի մեծ մասը ստիպված չի լինի դիմել նման ֆայլերի: Նման պայմաններում տուժում են թե՛ պետությունը եւ թե՛ հասարակությունը:**

**Ստվերային տնտեսության առկայությունը Հայաստանում, ըստ որոշ գնահատականների, ներքին համախառն արդյունքում կազմում է 50-70 տոկոս: Եվ եթե հաջողվի կրճատել թեկուզ 50 տոկոսով, ապա բյուջետային մուտքերի աճը ԱԱՀ մասով կկրկնապատկվի: Մեր կարծիքով, խոշոր չափերի հասնող ստվերային տնտեսության առաջացմանը նպաստում է ԱԱՀ սահմանված 20 տոկոսի տոկոսադրույքը: Այն հնարավորություն է ընձեռնում նաեւ ձեւավորելու բարձր գին, ինչը մեծ չափերի հասնող ստվերային տնտեսության առկայության պայմաններում ձեռներեցներին հնարավորություն է տալիս ապահովելու գերշահույթ, որի առկայությունը չի արտահայտվում եւ ոչ մի հաշվետվության մեջ: Ստեղծված իրավիճակում նպատակահարմար ենք համարում ուշադրությունն ուղղել հատկապես գների բարձր մակարդակի զսպման վրա, սահմանելով ԱԱՀ մինչեւ 10 տոկոսի սանդղակ, որին կարելի է հասնել ստվերի թեկուզ 50 տոկոսի կրճատման հաշվին՝ առանց վնասելու պետ. բյուջեի մուտքերը:**

**Անհրաժեշտություն կա նաեւ կիրառելու ԱԱՀ դիֆերենցացված մոտեցում (ստանդարտ եւ իջեցված), որը կիրառվում է այդ հարկից օգտվող համարյա բոլոր երկրներում:**

**ԱԼԲԵՐՏ ԿՈՉԿԱԿԱՐՅԱՆ**

*ԱՐՁԱԳԱՆԳ*

# ՀՀ ԿԱ ՊԵԿ անդրադարձը մամուլում տեղ գտած մի քանի հրապարակումներին

Գաղտնիք չէ, որ հարկային հավաքումներին վերաբերող ցուցանիշները մամուլի էջերում հաճախ են դառնում քննարկման առարկա: Նման ակտիվությունը վկայում է ՀՀ Պետեկամուտների կոմիտեի կողմից իրականացվող աշխատանքների եւ ընթացող բարեփոխումների հանդեպ ուշադրության մասին, ինչը ոգեւորիչ է: Ցավոք, մամուլի էջերում նաեւ հաճախ կարելի է հանդիպել թվերի տրամաբանությունը չհասկանալու հետեւանքով կամ ուղղակի գիտակցված խեղաթյուրումների, ուղղակի սուտ, բայցեւ բարձրագոռգոռ վերնագրերի կամ ապատեղեկատվության: Ընդամենը վերջերս էր, երբ Պետեկամուտների կոմիտեն հերթական ծրագրային ժամանակահատվածն ավարտեց ծրագրային ցուցանիշների գերակատարումով, բայց տեղեկատվության առանձին միջոցներ «լուսաբանեցին» թերհավաքումների վերաբերյալ սեփական հայտնագործությունները:

Վերջին նման լրագրողական վերլուծությունը ընդդիմադիր թերթերից մեկում տպագրված հոդվածն էր 2011թ. առաջին կիսամյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ մի քանի խոշոր ընկերությունների վճարած հարկերի նվազման մասին: Եվ կրկին մշտական սխալը՝ թվերի պարզ համադրություն-մակերեսային դիտարկում-խոր գնացող բոցաշունչ քաղաքական եզրակացություններ: Այսպես, առանց ընդհանուր մուտքերի կառուցվածքի վերլուծության, այդ կառուցվածքում խոշոր բիզնեսի տեսակարար կշռի եւ դրա ուղղակի աճին անդրադառնալու, երբ առաջին խոշոր 1000 ձեռնարկությունները ապահովում են ընդհանուր հարկային մուտքերի 75%-ը, իսկ 60 %-ը ապահովվում է միայն Խոշոր հարկ վճարողների հարկային տեսչությունում գրանցված 440 ձեռնարկությունների կողմից՝ փորձ է արվում մի քանի խոշոր տնտեսվարող սուբյեկտների միայն 6 ամսվա վճարումների դինամիկայի հիման վրա խոշոր բիզնեսի վճարումների նվազման միտում տեսնել:

Շտապում ենք հավաստել, որ հոդվածում բերված պարզ համադրումները ճիշտ են. այո, այդ մի քանի ընկերությունների կողմից պետբյուջե վճարումների նվազում է արձանագրվել առաջին կիսամյակի տվյալներով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: Բայց մի քիչ ավելի անաչառ վերլուծողը կարող էր նկատել, ասենք, որ.

1. «Զերնուկ Գրուպ» ՓԲԸ-ն նվազեցրել իր ապրանքաշրջանառությունը, հետեւաբար նաեւ պակաս հարկ է վճարել, քանի որ ի տարբերություն 2010-ի, 2011 թվականին դադարեցրել էր «Pepsi Cola» ապրանքատեսակի ներմուծումը հանրապետություն: Փոխարենը հանրապետությունում հիմնադրվել է նոր ձեռնարկություն՝ նոր հարկատու, որը շահագործման է հանձնել «Pepsi Cola» ապրանքատեսակ արտադրող ժամանակակից գործարան՝ ստեղծելով նոր աշխատատեղեր եւ ձեւավորելով լրացուցիչ հարկային բազա (թող որեւէ մեկն ասի, որ վատ միտում կա այստեղ),

2. չի կարելի, չնշելով «ՍԱՍ Գրուպ» ՍՊԸ-ից գանձված ընդհանուր մուտքերի կառուցվածքում հարկային մուտքերի աճի մասին, ընդգծել մաքսային մուտքերի նվազման փաստը՝ առանց ճշտելու դրա հնարավոր պատճառը: Իսկ տարբերության պատճառը, ընդամենը նրանում է, որ նշված կազմակերպությունը 2010 թվականին նոր մասնաճյուղ գործարկելու նպատակով հանրապետություն է ներկրել 100.0 մլն դրամից ավել արժողությամբ հիմնական միջոցներ եւ տարբեր սարքավորումներ, որոնց համար էլ ժամանակին կատարել է մաքսային վճարումները (թող որեւէ մեկն ասի, որ վատ միտում կա այստեղ),

3. «Մուլտի Գազ» ՍՊԸ մուտքերի նվազումը պայմանավորված է իրացման շրջանառության նվազմամբ: Միեւնույն ժամանակ, գազալցակայանների գործունեությամբ զբաղված հարկ վճարողների ֆիսկալ իրացման շրջանառությունը ողջ հանրապետությունում 2011թ. առաջին կիսամյակում կազմել 17.5 մլրդ դրամ եւ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճել է 1.4 մլրդ դրամով կամ 8.7%-ով: Ավելի քան 270 գազալցակայաններից շուրջ 100-ի ֆիսկալ շրջանառությունները նվազել են մոտ 3.3 մլրդ. դրամով, իսկ շուրջ 160-ի մոտ՝ 4.8 մլրդ. դրամով ավելացել: Սա նշանակում է, որ նշված ոլորտում շարունակում է խորանալ մրցակցությունը: Նման մրցակցության եւ գերիշխող դիրքերի խարխլման պայմաններում ծնվում են նոր կազմակերպություններ (2011թ.-ին նախորդ տարվա համեմատությամբ գազալցակայանների թիվը ավելացել է շուրջ 10-ով) եւ տեղի է ունենում իրացման շրջանառությունների բնական վերաբաշխում (թող որեւէ մեկն ասի, որ վատ միտում կա այստեղ),

4. իր շրջանառությունն ավելացնող (եւ ավել հարկեր վճարող) մրցունակ գազալցակայանները շուկայում սեգմենտ են վերցնում նաեւ վառելանյութ ներկրող եւ իրացնող կազմակերպություններից: Հետեւաբար այս կազմակերպությունների բյուջետային վճարումների նվազման բանալին հենց նրանց իրացման շրջանառությունների նվազումն է (թող որեւէ մեկն ասի, որ վատ միտում կա այստեղ),

5. չի կարելի համեմատել «Կոտայք» գարեջրի գործարանի երկու ժամանակահատվածների մուտքեր, որոնցից մեկում (2011 թ.-ի մայիս-հունիս), կապված սեփականատերերի եւ կառուցվածքային փոփոխության հետ, գործարանն աշխատել է ոչ լրիվ կարողություններով (միայն թե չասեք՝ տեղյակ չէիք դրա մասին): Արդյունքում իրացված գարեջրի ծավալը պակասել մոտ 44.0 %-ով, որի հետեւանքով էլ մոտ 21.4 %-ով պակասել են հարկային վճարումները:

6. «Ալեքս Գրիգ» ՍՊԸ ընդհանուր մուտքերի նվազումը եւս դետեկտիվ ֆիլմերի սյուժեներից չէ: ՊԵԿ որդեգրած եւ տնտեսվարող սուբյեկտների կողմից բազմիցս ողջունված քաղաքականության համատեքստում այս կազմակերպության պարտավորությունների մի մասը մարվել է ձեւավորված նախկին գերավճարի հաշվին (թող որեւէ մեկն ասի, որ վատ միտում կա այստեղ): Բացի դրանից, բավական հեշտ է նաեւ ստուգել, որ 2011թ. ներկրումների ընդհանուր ծավալում մաքսատուրքով չհարկվող ապրանքատեսակների տեսակարար կշիռն է ավելացել:

7. «Ապեյրոն» ՍՊԸ մուտքերի նվազման դինամիկան էլ պայմանավորված է տվյալ բիզնեսի կազմակերպման առանձնահատկություններով եւ կառուցվածքային փոփոխություններով: Նվազել է ոչ թե տնտեսվարող սուբյեկտի հարկելիությունը, այլ պակասել կոնկրետ նրա կողմից որոշ ապրանքանիշերի ներկրման ծավալը, որն առանձնացվել ու ներմուծվել է (հետեւաբար եւ հարկվել) այլ կազմակերպության կողմից՝ կապված արտադրող գործարանների պահանջներից եւ մրցակցությունից (թող որեւէ մեկն ասի, որ վատ միտում կա այստեղ):

Այս ամենն իհարկե կնկատեր միայն անաչառ վերլուծողը: Մեր կողմից միայն ավելացնեմ, որ մենք շարունակելու ենք մեր թափանցիկ աշխատանքը, մշտապես պարբերաբար հրապարակելու ենք առավելագույն տեղեկատվություն վճարված հարկերի ու դրանց կառուցվածքի մասին՝ ակնկալելով պրոֆեսիոնալ եւ ոչ ուղղորդված լուսաբանում:

*ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժին*

# Արեւմուտքը պատրաստվում է պատժել Սիրիային

## *Մոսկվան դեմ է Ասադի հրաժարականին*




Արեւմուտքի մի խումբ պետություններ մտադիր են անհապաղ աշխատանք սկսել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի այն բանաձեւի վրա, որը Սիրիայի իշխանություններին կդատապարտի բողոքի ելույթների ճնշման համար, ինչպես նաեւ կնախատեսի հակասիրիական պատժամիջոցներ: ՄԱԿ-ի կենտրոնակայանում Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի եւ ԱՄՆ-ի ներկայացուցիչները լրագրողներին հայտարարել են, որ դա «անհրաժեշտ է Սիրիայի կառավարության վրա ճնշումն ուժեղացնելու համար», որը շարունակում է «մարդու իրավունքների լայնածավալ խախտումները»:

«Մենք պատրաստ ենք համատեղ գործողություններ ձեռնարկել Բաշար Ասադի վարչակարգի դեմ», մասնավորապես հայտարարել է ՄԱԿ-ում ԱՄՆ-ի մշտական ներկայացուցչի առաջին տեղակալ Ռոզմարի դի Կառլոն: Նրա խոսքը մեջբերում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունը:

Մեծ Բրիտանիայի մշտական ներկայացուցչի տեղակալ Ֆիլիպ Պարեմը հակասիրիական հնարավոր պատժամիջոցների շարքում նշել է ակտիվների սառեցումը, բռնություններին առնչվող սիրիացի ֆիզիկական եւ իրավաբանական անձանց տեղաշարժերի սահմանափակումը, զենքի մատակարարումների արգելքը:

ՄԱԿ-ում մարդու իրավունքների գերագույն հանձնակատար Նավանեթեմ Պիլլեյը Անվտանգության խորհրդի դռնփակ նիստում, դիվանագետների խոսքերով, «ուրվագծել է Սիրիայի դեպքերի ճնշող պատկերը՝ մարդու իրավունքների սիստեմատիկ խախտումներ, սպանություններ, զանգվածային ձերբակալություններ, խոշտանգումներ»: Նա Անվտանգության խորհրդին հանձնարարել է տվյալ հարցը հանձնել Հաագայի Միջազգային քրեական դատարանի քննարկմանը:

Շաբաթ օրը՝ օգոստոսի 20-ին, ՄԱԿ-ը Սիրիա կգործուղի մարդասիրական առաքելություն՝ տեղում հումանիտար իրավիճակը գնահատելու համար:

Ինչ վերաբերում է Ռուսաստանին, նա դեմ է Բաշար Ասադի հրաժարականին, ինչը հինգշաբթի օրը պահանջել էին ԱՄՆ-ը եւ Եվրամիությունը: Ռոյթեր գործակալությունը մեջբերում է երեկ ՌԴ ԱԳՆ աղբյուրի արած հետեւյալ հայտարարությունը. «Մենք չենք պաշտպանում հրաժարականի կոչերը եւ կարծում ենք, որ անհրաժեշտ է նախագահ Ասադի վարչակարգին ժամանակ տալ իրագործելու հայտարարված բոլոր բարեփոխումները»:

Պ. Ք.

# Գազա-Իսրայել. լարվածությունը խորանում է



Իսրայելի օդուժը երեկ գիշեր ռմբահարվածներ է հասցրել Գազայի հատվածին: Վարչապետ Բենիամին Նաթանյահուի խոսքերով՝ դա օգոստոսի 18-ին պաղեստինցիների կատարած ահաբեկչությունների պատասխանն է:

Այդ օրը Իսրայելի Էյլաթ քաղաքի շրջակայքում պաղեստինցի գրոհայինները թիրախ էին դարձրել մի մարդատար ավտոբուս, ապա պայթուցիկ սարքեր գործի դրել զինվորականների ճանապարհին, իսկ վերջում Եգիպտոսի կողմից իսրայելցիների վրա կրակ բացել հակատանկային զենքից եւ ականանետից: «Հաարեց» թերթի տվյալներով, ահաբեկչությունների հետեւանքով սպանվել էին 8 եւ վիրավորվել առնվազն 26 իսրայելցիներ: Սպանվածներից երեքը զինվորականներ էին:

Ի պատասխան՝ իսրայելական ռազմօդանավերը երեկ գիշեր հարվածել են Գազայի հատվածի Ռաֆահ քաղաքի որոշ թիրախների: Հարվածների հետեւանքով սպանվել են «Ժողովրդական դիմադրության կոմիտեների» ահաբեկչական խմբավորման տեղացի առաջնորդ Քամալ ալ Նեյրաբը, նրա զինակիցներ Խալեդ Շաաթը, Իմադ Համադը եւ Խալեդ Մասրին: Ռոյթեր գործակալության տվյալներով, զոհվել է նաեւ մեկ երեխա:

«Կոմիտեների» ներկայացուցիչ Աբու Մուջահեդը «Ալ Աքսա» ռադիոկայանի եթերում երեկ հայտարարել է, որ խմբավորման անդամները վրեժ կլուծեն իրենց առաջնորդի սպանության համար:

Պաղեստինյան «Համաս» արմատական խմբավորումը հայտարարել է, թե ինքը կապ չունի Էյլաթի ահաբեկչությունների հետ, իսկ «Իսլամական ջիհադ» խմբավորման ներկայացուցիչը Ֆրանսպրեսի թղթակցի հետ զրուցելիս ասել է, որ ահաբեկչությունները «պաղեստինցիների եւ տարածաշրջանի մյուս ժողովուրդների դեմ գործված ոճիրների հատուցումն են»:

«Համասի» ներկայացուցիչ Իսմայիլ Ռադուանը իր հերթին պաղեստինյան բոլոր խմբավորումներին կոչ է արել «ամբողջ ուժով պատասխան տալ իսրայելական ագրեսիային»:

Օգոստոսի 19-ի առավոտյան պաղեստինցի ահաբեկիչները վերսկսել են Իսրայելի հրթիռակոծումը: Սկզբում «գրադ» հրթիռ է արձակվել դեպի Բեեր Շեւա, ավելի ուշ երկու հրթիռ է պայթել Աշդոդի եւ Աշկելոնի միջեւ: Որոշ ժամանակ անց «Քասսամ» հրթիռ է արձակվել դեպի Աշկելոն: Այդ հարվածներից ոչ ոք չի տուժել: Սակայն Աշդոդի սինագոգի վրա ընկած մեկ ուրիշ հրթիռի պայթյունից տուժել է 6 մարդ:

# Անկախության օրը թալիբները հարձակվել են բրիտանական ներկայացուցչության վրա

Քաբուլում երեկ մի խումբ զինյալներ ներխուժել են Բրիտանական խորհրդի համալիր: BBC-ի տվյալներով, սպանվել է 12 մարդ: Նրանցից ութը ոստիկաններ են: Վիրավորվել է 15 մարդ:

Աֆղանական հետախուզության ներկայացուցիչները նշում են, որ հարձակումը կատարվել է երեք փուլով: Սկզբում մահապարտ ահաբեկիչը իրեն պայթեցրել է համալիրի առջեւի հրապարակում: 10 րոպե անց մեկ ուրիշ մահապարտ ականված ավտոմեքենա է պայթեցրել Բրիտանական խորհրդի դարպասի մոտ: Երբ սկսել են մարդկանց տարհանել, ռռնականետներով, ծանր գնդացիրներով եւ ինքնաձիգներով զինված 9 գրոհայիններ կրակելով շարժվել են դեպի Բրիտանական խորհրդի շենքը:

Ոստիկանների եւ գրոհայինների փոխհրաձգությունը շարունակվել է երեք ժամից ավելի: Համալիրի պատերից մեկը փլուզվել է:

Մեծ Բրիտանիայի արտգործնախարարության պաշտոնական ներկայացուցիչը հաստատել է հարձակման փաստը: «Մեր դեսպանատունը համակարգում է գործողությունները Աֆղանստանի իշխանությունների հետ, որոնք զբաղվում են միջադեպով», ասել է նա:



Հարձակման պատասխանատվությունը ստանձնել է «Թալիբան» շարժումը:

Բրիտանական խորհուրդը Լոնդոնից ֆինանսավորվող կազմակերպություն է, որն աշխարհում իրականացնում է մշակութային եւ կրթական նախագծեր:

Օգոստոսի 19-ին Աֆղանստանում նշվում է Անկախության օրը: 1919-ին այդ օրը երկիրը դուրս եկավ Բրիտանական կայսրության կազմից:

Թալիբները հայտարարել են, որ իրենց հարձակումը կազմակերպված էր հենց Անկախության օրվա առթիվ:

ՀԱՄԱՌՈՏ

# Թուրքիա. Կոչ՝ մասնակցելու «Հաբաբ աղբյուրների» վերականգնման աշխատանքներին

«Հրանտ Դինք հիմնարկը» կոչ է հղել 18 տարին լրացած երիտասարդներին՝ մասնակցելու Էլյազըղ նահանգի Կովանջըլար շրջանի Հաբաբ գյուղի աղբյուրների վերանորոգման աշխատանքներին:

Հաբաբն այն գյուղն է, որտեղ ապրել է իրավաբան Ֆեթհիյե Չեթինի տատը, ըստ նրա «Մեծ մայրիկս» գրքի, իսկ այնտեղ գտնվող աղբյուրները սեփականությունն են «Հալիլ եւ Ռուֆիկաշը Բեյլեր» հիմնարկության: Դրանք Անատոլիայի հայ ճարտարապետների ստեղծած շինությունների վառ օրինակներից են, որոնք սանիտարական վաս պայմաններում գտնվելով հանդերձ, այսօր գործածվում են որպես ջրի աղբյուր գյուղացիների կողմից: Վերանորոգվելուց հետո դրանք արտահայտելու են իրենց ժամանակի բնորոշ հատկանիշները: Վերանորոգման աշխատանքներին ֆինանսական օգնություն է խոստացել տրամադրել Թուրքիայի մշակույթի նախարարությունը: Մասնակիցների գյուղում մնալու եւ սնվելու ծախսերը հոգալու է «Հրանտ Դինք հիմնարկը», որը նաեւ մշակել է պատմական-մշակութային թեմաներով միջոցառումների շարք նրանց համար:

Հ. Ծ.

# Լոս Անջելես. Արա Գալֆայանը՝ «Տարվա գործարար»

Լեքսինգտոնի (Գլենդեյլ) հյուսիսային կենտրոնական պողոտայի «Ֆենեսիա» ռեստորանի սեփականատեր Արա Գալֆայանը ճանաչվել է «Տարվա գործարար» Հարավային Կալիֆոռնիայի ռեստորանների գնահատող հանձնախմբի կողմից, տեղեկացնում է «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի օգոստոսի 6-ի համարը:

Նրան հատուկ վկայական եւ մեդալ են շնորհել հանդիսավոր խնջույքի ժամանակ, որը տրվել է պատվելու համար նրա բացառիկ շնորհքն ու տաղանդը այդ բնագավառում: Արայի լիբանանյան ռեստորանում բարձրաճաշակ խոհանոցային եւ սպասարկումին ընկերակցում են նաեւ ջերմ ընկերական մթնոլորտը, գեղեցիկ երաժշտությունն ու միջերկրականյան էկզոտիկ պորտապարը:

Ռեստորանների գնահատող հանձնախումբը ստեղծվել է 1975-ին՝ խթանելու ռեստորանային արդյունաբերությունը եւ բարելավելու սպասարկման մակարդակը: Հանձնախմբի անդամները ամիսը մեկ հավաքվում են կարծիքներ փոխանակելու համար, իսկ մրցանակը շնորհվում է տարեկան մեկ անգամ՝ ըստ նախօրոք կազմված հարցաթերթիկի գնահատականների: Սովորաբար ընդգրկված են լինում Սանտա Բարբարայից մինչեւ մեքսիկական սահմանը ձգվող տարածքի ռեստորանները:

Հ. Ծ.

# Երկրաշարժ Ֆուկուշիմայի պրեֆեկտուրայում

Ճապոնիայի ազգային օդերեւութաբանական վարչությունը հայտարարել է, որ երեկ առավոտյան 6,8 մագնիտուդով երկրաշարժ է արձանագրվել Ֆուկուշիմայի պրեֆեկտուրայի ծովափնյա շրջանում: Երկրաշարժից հետո իշխանությունները բնակչությանը նախազգուշացրել են, որ առկա է ցունամիի վտանգ: Սակայն մի քանի ժամ անց նախազգուշացումը չեղյալ է հայտարարվել:

Ստորգետնյա ցնցումները ավերածություն չեն առաջացրել, տուժածների վերաբերյալ հաղորդումներ չեն հրապարակվել, նշում է Ֆրանսպրես գործակալությունը: Երկրաշարժից հետո ատոմակայաններում, այդ թվում՝ մարտի 11-ի տարերքից վթարված «Ֆուկուշիմա-1»-ում, նոր խնդիրներ չեն ծագել: Այդ մասին հայտնել են երկրում գործող ատոմակայանների օպերատոր ընկերությունները:

Երեկվա երկրաշարժն ազդել է տրանսպորտի աշխատանքի վրա: «Ջեյ Ար» երկաթուղային ընկերությունը ստիպված է եղել երկու ուղղություններով կանգնեցնել «Սինկանսեն» ճեպընթացների երթեւեկությունը: Ցունամիի վտանգի կապակցությամբ ժամանակավորապես դադարեցվել է երթեւեկությունը ափամերձ ավտոմայրուղիների վրա:

Երկրաշարժի էպիկենտրոնը Ֆուկուշիմայի պրեֆեկտուրայի ծովափի մոտակայքում էր, իսկ օջախը 20 կմ խորության վրա էր: Ստորգետնյա ուժեղ ցնցումներ երեկ զգացվել են Ճապոնիայի 47 պրեֆեկտուրաներից 22-ում:

# Էրդողանի օդանավը անհաջող վայրէջք է կատարել Սոմալիում

Թուրքիայի վարչապետի գլխավորած պատվիրակությանը Սոմալի տանող Turkish Airlines ավիաընկերության օդանավը երեկ առավոտյան անհաջող վայրէջք է կատարել մայրաքաղաք Մոգադիշոյի օդանավակայանում, հաղորդում է Անատոլու գործակալությունը:

Պատվիրակության կազմում էին գործարարներ, վարչարարներ, պատգամավորներ, երգիչներ եւ անվտանգության ծառայությունների գործակալներ: Ֆրանսպրես գործակալության տվյալներով, վայրէջքի ժամանակ օդանավի թեւը դիպել է թռիչքուղուն, պատճառվել են նյութական վնասներ: Պատվիրակության անդամներից որեւէ մեկը չի վիրավորվել:

Վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանին ուղեկցում են իր տիկինը՝ Էմինեն, ինչպես նաեւ արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն: Այցելության նպատակն է տեղում ծանոթանալ երաշտից տուժած Սոմալիի վիճակին եւ այնտեղ Թուրքիայի ձեռնարկած օգնության գործողությունների ընթացքին:

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՄԱՄՈՒԼ

# Արեւմտահայերէնի հիմնախնդիրին քաղաքական նշանակութիւնը

Համասփիւռքեան կրթական Գ. համագումարը, իր նախաձեռնող կողմով, կայացման վայրով, մասնակիցներով եւ արծարծած նիւթերով իրադրային նշանակութիւն ունենալու բոլոր հանգամանքները ունի: Համագումարը, որ նուիրուած է «Արեւմտահայերէնի կացութիւնը այսօր՝ մարտահրաւէրներ եւ առաջադրանքներ» նիւթին, կոչուած է քննարկելու ամէնէն հրատապ նիւթը, որ կը յուզէ նախ եւ առաջ ամբողջ արեւմտահայ աշխարհը:

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը՝ իբրեւ սփիւռքի հոգեւոր, ազգային ու մշակութային կեդրոն, բոլոր նախադրեալները ու հանգամանքները ունի նման համասփիւռքեան եւ շեշտակիօրէն նաեւ՝ համահայկական տարողութեամբ հարցերու քննարկման եւ մանաւանդ անոնց լուծման մեքենականութիւններու ճշդումի նախաձեռնութիւնները ստանձնելու: Կրթականը համընդհանուր այս առաջադրանքներուն կարեւոր բաղադրիչներէն է, եւ այս պարագային արեւմտահայերէնի պարզած իրավիճակը, դիմագրաւած խնդիրները ու մանաւանդ զանոնք յաղթահարելու ուղիներու որոնումները ու համապատասխան միջոցներու որդեգրումը պատմական կարեւորութիւն ներկայացնող ա՛յս միջավայրէն է, որ պէտք է նախաձեռնուին, տնօրինուին եւ ընթացք առնեն:

Լեզուական այս հիմնահարցը անշուշտ ունի քաղաքական խորք: Արեւմտահայերէնը, ինչպէս Արեւմտահայաստանի ու արեւմտահայոց մշակութային տարբեր բնոյթի ժառանգութիւնները ունին «նախացեղասպանութիւն» եւ «յետցեղասպանութիւն» իրավիճակներ: Եւ եթէ այսօր միջազգային կազմակերպութիւններ կ՛ահազանգեն արեւմտահայերէնի վտանգուածութեան մասին, կը խօսին անոր նահանջին մասին, ապա խնամքով անուշադրութեան կը մատնեն պատճառահետեւանքային տրամաբանութիւնը՝ պարզելու համար, որ ե՞րբ եւ ինչո՞ւ սկսաւ իր բնօրրանէն դուրս օգտագործուող հայերէնի այս ճիւղը ապրիլ իր նահանջը: Կամ՝ արեւմտահայերէնը իր կատարելագործութեան ու բարձրակէտին հասցուցած մտաւորականութեան սերուցքը մէկ գիշերուան մէջ ի՞նչ ճակատագիրի արժանացաւ:

Ահազանգ բարձրացնող միջազգային լեզուագէտներն ու փորձագէտները, եթէ չեն ուզեր քննարկել լեզուի նահանջին տուն տուող պատմաքաղաքական շարժառիթները, ապա բնականաբար կ՛իմաստազրկեն իրենց հնչեցուցած ահազանգները կամ լեզուներու գոյավիճակներուն մասին կատարած դասակարգումները: Արեւմտահայերէնը արեւմտահայ մշակութային ժառանգութեան հասցուած ցեղասպանական հարուածէն զերծ չէ մնացած: Հարուածին ազդեցութիւնը երկարաժամկէտ բնոյթ ունի եւ ահաւասիկ Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի սեմին, Ցեղասպանութեան հարուածը կը զգացուի ամենաասուր ձեւով: Ցեղասպանութեան հատուցումի իրաւական թղթածրարի պատրաստութեան ընթացքին իրաւագէտները անպայման նկատի կ՛ունենան այս պարագան եւս եւ այսօրուան իրավիճակին կամ համամարդկային արժէք ներկայացնող լեզուական հարստութեան մը տկար նօսրացման երեւոյթին համար գլխաւոր պատասխանատուութեան սիւնին կը գամեն ցեղասպան պետութեան այսօրուան ժառանգորդ Թուրքիան:

Այս առումով ալ, ճիշդ է, որ արեւմտահայերէնի այսօրուան պատկերը նախ եւ առաջ կը յուզէ արեւմտահայ աշխարհը, այսուհանդերձ խնդիրը պէտք է յայտնուի նաեւ Հայաստանի պետութեան ուշադրութեան կիզակէտին: Ի վերջոյ, Հայաստանի Հանրապետութեան սահմանադրութեամբ պետական լեզուն հայերէնն է (եւ ոչ թէ արեւելահայերէնը սոսկ): Եւ հայերէնը պարտի ապրիլ, զարգանալ ու ստեղծագործուիլ իր երկու ճիւղերով: Նկատի ունենալով նաեւ խնդիրին քաղաքական էութիւնը, արեւմտահայերէնի փրկութեան, զարգացման , ծաւալման եւ այսօրուան իրավիճակին քաղաքական պատասխանատուութեան գնահատական տալու աշխատանքները հայրենիք-սփիւռք համակարգուած աշխատանքի ուղենիշեր կ՛ենթադրեն: Այս տեսակէտէն Հայաստանի գրողներու միութեան նախագահին ներկայութիւնը համագումարին՝ նման ուղղութեամբ մտածելու տեղի կու տայ:

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը իր պատմական առաքելութեան հիման վրայ համախմբած է Ցեղասպանութեան հետեւանքով գոյացած գաղութներու մտաւոր ներուժի ներկայացուցիչները ցեղասպանութեան մէկ կարեւոր հետեւանքին՝ արեւմտահայերէնին պարզած այսօրուան իրավիճակը քննարկելու եւ խնդիրներուն համապատասխան ու գործնական լուծումներու համար ուղիներ որոնելու եւ ճշդելու: Այս համախմբումը՝ ինչպէս հոգեւոր ու մշակութային, այնպէս ալ ազգային ու քաղաքական նկատառելի նշանակութիւն ունի: Մանաւանդ՝ ցեղասպանութեան 100-ամեակին ընդառաջ հիմնական պատասխանատուին պատժելիութեան եւ հատուցման իրաւական թղթածրարի պատրաստութեան համար:

**ՇԱՀԱՆ ԳԱՆՏԱՀԱՐԵԱՆ**
**Պէյրութ, «Ազդակ»ի գլխաւոր խմբագիր**

# «Սիմա» եռյակի համերգը Մոնրեալում

Մոնրեալի հայկական համայնքի արվեստագետները եզակի հնարավորություն ստացան մայիսի 29-ին ըմբոշխնելու «Սիմա» երաժշտական եռյակի համերգը, որը տեղի ունեցավ ՀԲԸՄիության կենտրոնի «Ժիրայր եւ Էլիզ Դերվիշյան» դահլիճում, տեղեկացնում է այդ առթիվ ՀԲԸՄ մամլո գրասենյակից ստացված հուլիսի 14-ի հաղորդագրությունը:

Եռյակը, որի անդամներն են Սոֆիա Մելեքյանը (դաշնամուր), Անի Գալայճյանը (թավջութակ) եւ Սամի Մերտինյանը (ջութակ), ժամանել էր Նյու Ջերսիից, իսկ տեր եւ տիկին Արմեն-Կարո Գյունճյանների հովանավորած համերգը կազմակերպել էր ՀԲԸՄ-ի Մոնրեալի մասնաճյուղի մշակութային հանձնախումբը:

Համերգի ընթացքում հնչել են Չեբոդարյանի, Բաբաջանյանի, Հայդնի եւ Մենդելսոնի ստեղծագործությունները:

Եռյակը, որն ընդամենը երկու տարի առաջ է կազմվել, արդեն մեծ համբավ է ձեռք բերել եւ համերգներով հանդես եկել Արգենտինայում, Կանադայում, Իսպանիայում, Մ. Նահանգներում եւ այլուր՝ ամենուրեք արժանանալով հանդիսատեսների եւ երաժշտագետների բարձր գնահատանքին:

**Հ. Ծ.**

# Երբ ժամանակի հրամայականը ճակատագիր է...

Մեզանում հազվադեպ է լինում, երբ ստեղծվում է գիրք, որը և՛ ստեղծագործական մի նոր աշխարհ է, և՛ միաժամանակ գրողի դիմանկար է՝ իր ստեղծագործության ֆոնի վրա: Յուրօրինակ ինքնադիմանկար կերտած իրեն մատչելի համարյա բոլոր գրական ժանրերով: Այդպիսի գիրք է Ռոբերտ Կարայանի «Մարդազարդի տոն արարենք» ժողովածուն (Երեւան, 2009, Վան Արյան, 494 էջ): Ասենք միանգամից՝ ինձ համար որքան հետաքրքրական է Կարայանի բազմաբնույթ եւ բազմաժանր գրական ստեղծագործությունը, այնքան եւ հետաքրքրական է ինքը՝ Կարայանը, իր մարդկային խառնվածքով, որն իր բնության մեջ կարողացել է համատեղել և՛ դոնկիխոտյան ասպետությունը, և՛ օսյանական սատիրան, և՛ ֆիդայական խիզախությունը, և՛ Օհան ամու համբերությունը (Իսահակյանի «Համբերանքի չիբուխը» պատմվածքից):




Ռ. Կարայանի նման մարդիկ ժամանակի հետ չեն փոխվում, այլ մնում են կանգուն կաղնու պես: Այդպես է իր գրած «Արեւը գեղեցիկ է մայրամուտին», «Անդրանիկի երգը», «Լեռները ծաղիկներ չեն վաճառում» բանաստեղծի ավյունով գրված վիպասքերը եւ, իհարկե, առաջին հերթին պատմավիպասանի ձեռքով գրած «Փրկություն» վիպերգությունը:

Նոր գրքում մեզ առավել զարմացնում է Կարայան բանաստեղծը՝ իր մշակած պոետական ժանրերի բազմազանությամբ ու թարմությամբ: Իր բնույթով բոլորովին նորարարական երգիծական պոեմը՝ «Մարդն իր հոգու ցավը զատի, կգա տոնը՝ մարդազարդի...», այս երկը տարբեր բնույթի բանաստեղծությունների խառնուրդ է, որտեղ իրար զուգորդում են երգիծանքն ու քաղաքացիական բողոքը, քնարական զեղումն ու հրապարակախոսական կիրքը: Այս ամենը ոչ թե ձեւական բնույթ են կրում, այլ թելադրված են այսօրվա իրականությամբ եւ արդիական հնչեղություն ունեն: Խոսքս հաստատեմ մի քանի բանաստեղծական պատկերներով.

**Գահին եկան, որ Ազգ պահե՞ն,**
**Թե՝ նոր բանկ, դղյակ՝ իրար շարեն...**
**Զարը՝ շահ- փոր, դարեր ագահ,**
**Մարդազարդի Տոնը ե՞րբ գա...**
**Եվ կամ թե՝**
**Հայ-Լուսատառ Ակադեմիա,**
**Ավա՜ղ, այսօր, ախ, անթեմա՞,**
**Փառքամիտքդ խոր դարերից,**
**Քեզ ո՞վ հանեց քո շող դերից...**

Այս մեկն էլ, որ ուղղված է անմոռանալի ծաղկավաճառ Կարաբալային.

**Ով Տեր Աստված, ո՞նց համբերես,**
**Ցուրտ է քաղաքն այս նահրյան,**
**Մեկը՝ հազար ծաղիկ բերեց,**
**Մեկը՝ զրկանք, ձյուն ու բորան...**
**Ախ, ի՞նչ անի Կարաբալան,**
**Ո՞նց չխմի ու ցնորի-**
**Ոտքերի մոտ կին-մուրացկան**
**Ձեռք է պարզել խեղճ անցորդի...**

Բոլոր այս երեք բանաստեղծություններն էլ թվագրված են 1993 թ. եւ այս թվականն ինքնին շատ բան է ասում 1990-ական թվականների, հայոց նորագույն պատմության այս ամենաողբերգական տասնամյակը, անխզելիորեն կապված է ամբոխավար «հրացանակիրների» գլխապտույտ կարիերայի հետ, որոնք իրենց անփառունակ գործունեությունը սկսեցին օպերայի հարթակից եւ ավարտեցին Զանգվի ափին խոյացած կոմունիստ ղեկավարների առանձնատներում, որտեղից նրանց «խնդրեցին» դուրս գալ չկամավոր հիմունքներով...

Թերթում ենք Ռ. Կարայանի ինքնադիմանկարի էջերը եւ հառնում ենք «Ռեքվիեմ» ծավալուն պոեմին: Այս երկը մի ինքնատիպ փորձ է ստեղծագործության հերոս ընտրելու Մեծն Նարեկացուն: Ռ. Կարայանը «դարի հանճարին բերում է» մեր օրերը, կապում մեր իրականության հետ եւ ապա նրա միջոցով տալիս իրադարձությունների գնահատականը:

Իրապես անհանգիստ ստեղծագործող է Կարայանը, որի համար չկան ո՛չ ժամանակային, ո՛չ տարածքային սահմանափակումներ: Եվ նրա ստեղծագործական անհանգստության պատճառը իր ներքին անհնազանդությունն է եւ անընդհատ մաքառումը հանուն արդարության եւ ճշմարտության: Այն, ինչ կատարվում է հեղինակի շուրջը՝ կարիք ունի հիմնավոր վերափոխման եւ հեղինակը կամավոր զինվոր է իրեն հռչակում այս պայքարում, հիշենք ինչպես Դոն Կիխոտն էր մարտնչում, սակայն ոչ թե անանուն հողմաղացների դեմ, այլ կոնկրետ մարդկանց եւ հոռի բարքերի դեմ:

Այս դիրքորոշումը գտնում է իր լավագույն արտահայտությունը՝ հանձինս նրա առակների եւ մանրաքանդակների: Հենց միայն առակների վերնագրերը շատ բան են ասում, «Թե ինչպես էշը դարձավ դափնեկիր», «Մոծակ արքայի մահը», «Խունկը վառվում է, բուրմունքը՝ մնում», «Մեղրակեր-շեֆն հարկահան...», «Հիմա մրջյունն է արքան բոլորի...»:

Հարկ կա՞ ասելու, եթե գրվում են առակներ, ուրեմն հույս կա կյանքը բարելավելու:

Ռ. Կարայանի վերջին գրքում զետեղված է մի ինքնատիպ ու սրամիտ նորահայտ ժանր. «Զարը զատիր, քեզ ազատիր...», որն ամբողջապես հիմնված է հականուն (անտոնիմ) բառերի ու բառախաղերի վրա: Այն ամենայն առումով նորարարական երկ է, որը կրում է թե՛ խրատական, թե՛ քննադատական ուրույն լիցք ու կրկին վկայում Ռ. Կարայանի երիտասարդական ավյունով լի մուսայի մասին.

**Բարգավա՞ճ, թե՞ հարկա-աճ:**
**Կողմնակի՞ց, թե՞ հողմ՝ տակից,**
**Հույս տա՞լ, թե՞ խույս տալ,**
**Հավատավո՞ր, թե՞ արատավոր,**
**Հարթ ու զարդե՞լ, թե՞ մարդ ջարդել,**
**Բան սարքե՞լ, թե՞ բանսարկել,**
**Հասկանա՞լ, թե՞ բազկանալ,**
**Տաղանդատե՞ր, թե՞ աղանդատեր,**
**Հողագե՞տ, թե՞ փողագետ,**
**Նռնանա՞լ, թե՞ բռնանալ,**
**Աշխարհանդե՞ս, թե՞ նշխար քանդես...**
**Խորհե՞լ, թե՞ ժխորել:**

Ավարտում ենք վաստակաշատ հեղինակի գիրքը համոզմունքով, որ Ռ. Կարայանը իր ողջ կյանքի ընթացքում իր ազգակարոտ նշխարն է արարել ու պարզել իր ժողովրդին:

**ԱՎԻԿ ԻՍԱՀԱԿՅԱՆ**

# Մաժակ Թոշիկյանն ավարտում է «Դարեդար Աղթամար» օրատորիան

Ստամբուլում ապրող եւ ստեղծագործող տաղանդավոր երգահան Մաժակ Թոշիկյանն այս օրերին իր ավարտին է հասցնում բանաստեղծ Իգնա Սարըասլանի «Դարեդար Աղթամար» երկարաշունչ բանաստեղծության հիման վրա հորինած իր նույնանուն օրատորիան, որտեղ կենսունակ ու խանդավառ կշռույթներով իրար հետ հիանալիորեն միահյուսվում են հայ դասական երաժշտությունն ու ժամանակակից երաժշտությունը: Այս մասին տեղեկանում ենք Կանադայում լույս տեսնող «Ապագայ» շաբաթաթերթի հունիսի 27-ի համարից, որն իր հերթին այն արտատպել է Պոլսո «Մարմարա» օրաթերթից:



Առինքնող մեղեդիներ պարունակող այդ քառասուն րոպեանոց օրատորիայում մենակատարումներով հավանաբար հանդես են գալու Այլին Աթեշը (սոպրանո), Գեւորգ Դավթյանն ու Տիգրան Գարակյոզյանը (տենորներ):

Երաժշտական երկի կատարմանն իրենց համապատասխան բաժինն են բերելու նաեւ «Լուսավորիչ» երգչախումբը, խմբավարը՝ Հակոբ Մամիկոնյանը եւ Բաքըրգյուղից պարուսույց Հակոբ Գյուլեչի ժամանակակից բալետի խումբը:

Ավելացնենք, որ Մաժակ Թոշիկյանն այն երաժիշտներից է, ովքեր «Կոմիտաս» մեդալով պարգեւատրվեցին վերջերս ՀՀ սփյուռքի նախարար՝ տիկ. Հրանուշ Հակոբյանի ձեռամբ:

Նա հետաքրքրական գաղափարներ ունի երաժշտության ակունքների մասին: Թոշիկյանի կարծիքով, երաժշտությունն ամեն բանից առաջ պատկանում է ոչ թե ժողովուրդներին կամ ցեղերին, այլ աշխարհագրությանը, տեղանքին, այսինքն՝ հողին կամ ջրին (ծով, գետ): Լեռնային միջավայրը, օրինակ, ծնունդ է տալիս համապատասխան յուրահատուկ երաժշտության: Հողի ձայնն է իր արձագանքը գտնում երաժշտության մեջ: Օրինակ՝ ծովեզերյա շրջանների ժողովուրդների երաժշտությունը, ինչպես ծովը ինքը, ավելի օրորուն, ավելի վետվետուն, ավելի հարաշարժ նկարագիր ունի:

Վերջում ավելացնենք, որ «Դարեդար Աղթամար» օրատորիայի կատարումը, որն սպասվում է առաջիկա ձմեռնամուտին, կազմակերպչական առումով ունի գլխավոր մի դժվարություն՝ 25 հոգանոց արհեստավարժ նվագախմբի կազմությունը:

**Հ. Ծ.**

# Բադմինտոնի վետերանները Համահայկական խաղերի չեմպիոններ

Համահայկական 5-րդ խաղերում որոշվեցին բադմինտոնի մրցումների մրցանակակիրները։ Հետաքրքրական է, որ զուգախաղի մրցումներին մասնակցեցին բադմինտոնի վետերաններ Վարդիթեր Պողոսյանը եւ Բյուզանդ Ղասաբյանը։ Վարդիթեր Պողոսյանը Հայաստանի ուժեղագույն բադմինտոնիստներից մեկն էր, բազմիցս մրցանակային տեղեր է զբաղեցրել նախկին ԽՍՀՄ առաջնություններում ու միջազգային մրցաշարերում։ Բյուզանդ Ղասաբյանը Բուլղարիայի բադմինտոնի ֆեդերացիայի նախագահն է, նաեւ մարզաձեւի Հայաստանի ֆեդերացիայի պատվավոր նախագահը, նախկինում անվանի մարզիկ է եղել, այժմ էլ մարզական գործիչ է։ Ի դեպ, օրերս ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի ոլորտում ունեցած մեծ ավանդի, Հայաստանի մարզական կառույցների հետ համագործակցության համար Բյուզանդ Ղասաբյանը ՀԱՕԿ-ի նախագահ Գագիկ Ծառուկյանի հրամանագրով պարգեւատրվել է «Հրանտ Շահինյան» մեդալով։




Վերադառնալով մրցումներին, նշենք, որ անվանի վետերաններն իրենց գերազանց դրսեւորեցին զուգախաղերում։ Տղամարդկանց զուգախաղում Բյուզանդ Ղասաբյանն ընկերակցելով երեւանցի Հայկ Միսակյանին, դարձավ Համահայկական 5-րդ խաղերի չեմպիոն՝ եզրափակիչում պարտության մատնելով Սարգիս Հակոբյան (Սոֆիա)- Օհաննես Գասպարյան (Վառնա) երկյակին։ Բրոնզե մեդալակիրներ դարձան երեւանցիներ Գուրգեն Պողոսյանն ու Գոռ Հակոբյանը։

Կանանց զուգախաղում էլ Վարդիթեր Պողոսյանն ընկերակցելով Կիեւը ներկայացնող Ռուզաննա Հակոբյանին, եզրափակիչում առավելության հասան երեւանցիներ Լիլիթ Պողոսյանի եւ Լիլիթ Մինասյանի նկատմամբ։ Բրոնզե մեդալի համար մրցավեճում Մելինե Քոչարյան-Մարիամ Ղազարյան զույգը հաղթեց Վեներա Բդոյան-Հերմինե Զավարյան երկյակին։

Տղամարդկանց մենախաղում չեմպիոնի տիտղոսը նվաճեց Սոֆիայի ներկայացուցիչ Սարգիս Հակոբյանը, որը վճռորոշ մրցախաղում պարտության մատնեց երեւանցի Գուրգեն Պողոսյանին։ Բրոնզե մեդալի արժանացավ երեւանցի Հրաչյա Մնացականյանը՝ հաղթելով Վառնան ներկայացնող Հարություն Գասպարյանին։

Կանանց մենախաղում ոսկե մեդալը նվաճեց Լիլիթ Պողոսյանը, որն առավելության հասավ կիեւցի Ռուզաննա Հակոբյանի նկատմամբ։ 3-րդ տեղը գրավեց Թբիլիսին ներկայացնող Սվետլանա Վարդանյանը, որը պարտության մատնեց Լիլիթ Մինասյանին։

# Մեկ ձախողումը մեդալի արժեք ունեցավ

Համաշխարհային 26-րդ Ունիվերսիադայում ավարտվեցին ծանրամարտի մրցումները։ Վերջինը մրցահարթակ դուրս եկան գերծանրքաշայինները։ Այստեղ Հայաստանը ներկայացրեց 2010-ի Եվրոպայի երիտասարդների չեմպիոն Հայկ Հակոբյանը, որն այդ տիտղոսին արժանացել էր Լիմասոլում՝ երկամարտում ցույց տալով 390 կգ (180+210) արդյունք։ Այնպես որ Հայկից Ունիվերսիադայում սպասելիքները մեծ էին։

Ցավոք այդ սպասելիքները չարդարացան։ Հայ ծանրորդին չհաջողվեց մեդալ նվաճել, թեեւ շատ մոտ էր հաջողությանը։ Պոկում վարժությունը Հայկը վստահ կատարեց՝ հաջորդաբար բարձրացնելով 175, 181 եւ 186 կգ։ Դա 2-րդ արդյունքն էր։ Ավելի բարձր ցուցանիշ ուներ միայն հունգարացի Պետեր Նագին, որը բարձրացրել էր 192 կգ։ Այնպես որ հայ ծանրորդը մրցանակակիր դառնալու լավ հնարավորություններ էր պահպանում։ Ցավոք, 2-րդ վարժությունը նա այնքան էլ հստակ չկատարեց։ Առաջին մոտեցմամբ բարձրացնելով 211 կգ, Հակոբյանը միայն 3-րդ փորձի ժամանակ հաղթահարեց պատվիրած հաջորդ քաշը՝ 216 կգ-ը։ Եվ մեկ ձախողումը փաստորեն մեդալի արժեք ունեցավ։ Հայկը երկամարտում ցույց տվեց 402 կգ (186+216) արդյունք, ինչը 12 կգ-ով գերազանցում է նախորդ տարի Եվրոպայի երիտասարդական առաջնությունում իրեն ոսկե մեդալ պարգեւած ցուցանիշին։ Սակայն դա բավարար չէր նույնիսկ բրոնզե մեդալի համար։ Այդ պայքարում հայ ծանրորդը անձնական ավելի ծանր քաշի պատճառով բրոնզե մեդալը զիջեց նույնպիսի արդյունքի հասած ուկրաինացի Օլեգ Պրոշակին։ Վերջինս պոկում վարժությունում ցույց էր տվել 185 կգ, իսկ հրումում բարձրացրել էր 217 կգ։

Ոսկե մեդալի համար մրցավեճում էլ որոշիչ եղավ ծանրորդների անձնական քաշը։ Երկամարտի 412 կգ (185+227) արդյունքով Ունիվերսիադայի չեմպիոն հռչակվեց եգիպտացի Մոհամեդ Մասուդը։ Նա 4 կգ-ով ավելի թեթեւ էր արծաթե մեդալը նվաճած հունգարացի Պետեր Նագիից։ Վերջինս մրցաշարի 16 մասնակիցներից ամենածանրն էր՝ 151 կգ։

Այսպիսով, Ունիվերսիադայում հանդես եկած 5 հայ ծանրորդները նվաճեցին ընդամենը մեկ ոսկե մեդալ։ Չեմպիոնի տիտղոսին արժանացավ մինչեւ 77 կգ քաշային Աղասի Աղասյանը։ Այս ցուցանիշով Հայաստանի հավաքականը մեդալներ նվաճած 16 երկրների ցանկում զբաղեցրեց 8-րդ տեղը։ Բոլորից հաջող հանդես եկան չինացի ծանրորդները, որոնք նվաճեցին 4-ական ոսկե եւ արծաթե մեդալ։ 2-րդ տեղում Ռուսաստանի ներկայացուցիչներն են, որոնց հաշվեկշռում կա 4 ոսկե, մեկ արծաթե եւ 2 բրոնզե մեդալ։

# Բռնցքամարտիկները նախապատրաստությունը շարունակում են Իրանում

**Սեպտեմբերին Բաքվում կայանալիք բռնցքամարտի աշխարհի առաջնությանը նախապատրաստվող մարզաձեւի Հայաստանի ազգային հավաքականը մեկնել է Թեհրան, որտեղ կշարունակի մարզումները։ Մեր ընտրանին հավաքականի գլխավոր մարզիչ Ռաֆայել Մեհրաբյանի եւ մարզիչ Կարեն Աղամալյանի գլխավորությամբ Թեհրանում համատեղ ուսումնամարզական հավաք կանցկացնի Իրանի բռնցքամարտիկների հետ։**

**Նշենք, որ հայ բռնցքամարտիկները շատ լրջորեն են նախապատրաստվում տարվա գլխավոր ստուգատեսին։ Չէ՞ որ հենց Բաքվում կայանալիք աշխարհի առաջնությունում են խաղարկվելու 2012-ի Լոնդոնի ամառային օլիմպիադայի ուղեգրերը։ Դրանց կարժանանան քաշային յուրաքանչյուր կարգում 1-8-րդ տեղերը զբաղեցրած բռնցքամարտիկները։ Մինչեւ Իրան մեկնելը հավաքականը մարզվել էր Ծաղկաձորում։ Իսկ Իրանից վերադառնալուց հետո եւս մեկ հավաք է նախատեսված Արարատի «Այգ» մարզաբազայում։**




**Ուսումնամարզական հավաքին մասնակցում են 18 բռնցքամարտիկներ, որոնցից 9-ին բախտ կվիճակվի հանդես գալ աշխարհի առաջնությունում եւ պայքարել օլիմպիական ուղեգրերի համար։**

# Վիզաների հարցը դրականորեն լուծվեց

**Օգոստոսի 22-28-ը Դուբլինում կանցկացվի բռնցքամարտի Եվրոպայի երիտասարդական առաջնությունը։ Պատասխանատու այդ մրցումներին լրջորեն են նախապատրաստվել հայ բռնցքամարտիկները, որոնք Դուբլինում հանդես կգան քաշային 10 կարգերում։ Սակայն մինչեւ երեկ Հայաստանի հավաքականի մասնակցությունը հարցականի տակ էր, քանի որ Իռլանդիա մուտքի վիզաների ստացման հարցը ձգձգվում էր։ Երեկ այդ հարցը վերջապես դրական լուծում ստացավ, ու մեր հավաքականը հնարավորություն ունեցավ մեկնելու մրցավայր։**

**Երիտասարդական հավաքականի գլխավոր մարզիչ Դերենիկ Ոսկանյանը թիմի կազմում ընդգրկել է հետեւյալ 10 բռնցքամարտիկներին՝ Կորյուն Սողոմոնյանին (49 կգ), Արթուր Ներսիսյանին (52 կգ), Կոլյա Գրիգորյանին (56 կգ), Գոռ Երիցյանին (60 կգ), Արսեն Հայրապետյանին (64 կգ), Արայիկ Հարությունյանին (69 կգ), Վազգեն Շահվերդյանին (75 կգ), Անդրանիկ Խաչատրյանին (81 կգ), Ռաֆայել Սիմոնյանին (91 կգ) եւ գերծանրքաշային Վախթանգ Մկրտչյանին։**

ՇԱԽՄԱՏ

# Անդրեասյանն ու Մելքումյանն առաջատարների խմբում են

Չինաստանում ընթացող համաշխարհային Ունիվերսիադայի շախմատի մրցաշարի հերթական 2 տուրերն անհաջող էին առաջատարներից մեկի՝ Ավետիք Գրիգորյանի համար։ Մինչ այդ անպարտելի հայ շախմատիստը 2 անընդմեջ պարտություն կրեց չինացի Լի Չաոյից եւ գերմանացի Բրաուն Արիկից։ Այդ անհաջողությունների հետեւանքով Ավետիք Գրիգորյանը զիջեց առաջատարի դիրքը եւ 7 տուրից հետո 4,5 միավորով նահանջեց 12-րդ հորիզոնական։

Իսկ ահա Հրանտ Մելքումյանի եւ Զավեն Անդրեասյանի համար 6-րդ եւ 7-րդ տուրերը շատ հաջող դասավորվեցին։ Հրանտը հաղթանակներ տարավ Դավիթ Բենիձեի եւ Պավել Չառնոտայի հետ մրցախաղերում, իսկ Զավենը պարտության մատնեց Դան Բրանդենբուրգին եւ Վասիլի Պապինին։ Այս հաղթանակների շնորհիվ հայ շախմատիստները զգալիորեն բարելավեցին մրցաշարային իրավիճակը։ Նրանք 5,5 միավորով ընդգրկվեցին առաջատարների խմբում։ Իսկ աղյուսակը գլխավորում է 6,5 միավոր վաստակած Լի Չաոն, որը 7-րդ տուրում հաղթեց իր հայրենակից Վան Հաոյին։

Մրցաշարի 8-րդ տուրում ուշադրության կենտրոնում կլինի Հրանտ Մելքումյանի եւ Լի Չաոյի մրցավեճը, որում սպիտակներով խաղալու է հայ շախմատիստը։ Զավեն Անդրեասյանը սպիտակներով կմրցի Ալեքսանդր Ռահմանովի հետ, որը եւս 5,5 միավոր ունի։ Ավետիք Գրիգորյանի մրցակիցը կլինի Նի Հուան։

Կանանց մրցաշարում հերթական երկու տուրերում Աննա Հայրապետյանը 1,5 միավոր վաստակեց։ 6-րդ տուրում նա հաշտություն կնքեց Աննա Ռոթբարտի հետ, իսկ հաջորդ մրցախաղում հաղթեց Իսմայել Դալբակին։ 7 տուրից հետո Աննա Հայրապետյանը 4 միավորով 16-րդ տեղում է։

4,5 միավոր ունի Ռուսաստանը ներկայացնող Կարինա Համբարձումովան։ 6-րդ տուրում նա պարտվեց Քսիան Հուանգին, իսկ հաջորդ պարտիայում հաղթեց Գաբրիելա Սեբսին։

6-ական միավորով աղյուսակը գլխավորում են չինացի Ժոնգի Թանը եւ ուկրաինացի Օլգա Կալինինան։ Երկուսն էլ երկուական հաղթանակ տոնեցին։ Թանը հաղթեց Զուզանա Բորոսովային եւ Նինո Բացիաշվիլուն, Կալինինան պարտության մատնեց Յոլանտա Զավադսկային եւ Բաթչիմեգ Տուվշինթուգսին։

# Հավակնորդը կորոշվի նախկին մրցակարգով

Շախմատի աշխարհի չեմպիոնի տիտղոսի հավակնորդին որոշելու կարգը կրկին փոփոխվել է։ ՖԻԴԵ-ն որոշել է վերադառնալ հին մրցակարգին, ըստ որի տիտղոսի հավակնորդը պետք է որոշվի ութ ուժեղագույն շախմատիստների մասնակցությամբ 2 շրջանով անցկացվելիք մրցաշարի արդյունքներով։ Այս մասին հայտարարել է աշխարհի առաջնությունների անցկացման կոմիտեի անդամ Էմիլ Սուտովսկին։

Հավակնորդների մրցաշարին մասնակցելու իրավունք կստանան 2011-ի հուլիսից մինչեւ 2012-ի հունվար ընկած ժամանակահատվածում ամենաբարձր միջին վարկանիշն ունեցող 3 ուժեղագույն շախմատիստները, աշխարհի գավաթի խաղարկության 3 մրցանակակիրները, Անանդ-Գելֆանդ մրցախաղում պարտվածը։ 8-րդ մասնակիցը կլինի մրցաշարի կազմակերպիչ երկրի ներկայացուցիչը։

Նախատեսվում է մրցաշարն անցկացնել հաջորդ տարվա վերջին, որպեսզի 2013-ին հայտնի դառնա աշխարհի նոր չեմպիոնը։ Եթե մրցաշարում շախմատիստները հավասար միավորներ վաստակեն, ապա նախապատվությունը կտրվի անձնական հանդիպումներում առավելության հասած մասնակցին։ Այդ ցուցանիշի հավասարության դեպքում հաշվի կառնվեն այլ գործակիցներ։ Անեն դեպքում լրացուցիչ մրցախաղ նախատեսված չէ։

# Էտո’Օ-ի հարցով բանակցությունները ընդհատվել են

Կամերունցի հարձակվող Սամուել Էտո՛Օ-ի հարցով իտալական «Ինտերի» եւ Մախաչկալայի «Անժիի» միջեւ ընթացող բանակցությունները դադարեցվել են։ Կողմերը ոչ մի կերպ չեն կարողանում համաձայնության գալ ֆուտբոլիստի տրանսֆերային արժեքի շուրջը։ «Ինտերը» սկզբում 30 մլն էր պահանջում, հետո 1 մլն-ով նվազեցրեց գինը։ «Անժին» իր հերթին 22 մլն-ից առաջարկը հասցրեց 24 մլն-ի։ Նախատեսվում էր, որ կամերունցի ֆուտբոլիստը պետք է բժշկական հետազոտության ենթարկվի Հռոմի «Վիլա Ստյուարտ» կլինիկայում, սակայն դա եւս տեղի չի ունեցել։

Իսկ ահա Էտո՛Օ-ն արդեն «Անժիի» հետ համաձայնեցրել է պայմանագրի պայմանները։ Նրա տարեկան աշխատավարձը կկազմի 20 մլն եվրո։ Ֆուտբոլիստն ակումբի հետ 3 տարվա պայմանագիր կկնքի։

Եթե «Անժիի» հետ բանակցությունները դրական արդյունք չտան, ապա Էտո՛Օ-ն հնարավոր է, որ հայտնվի իսպանական «Մալագայում»։ Այս մասին հայտարարել է «Մալագայի» սեփականատեր Աբդուլա բեն Նասեր Ալ Թանին։ Նա նշել է, որ շատ ֆուտբոլիստներ են ցանկանում տեղափոխվել «Մալագա»։ Ակումբի սեփականատերը մտադիր է ուժեղացնել թիմի կազմը համաշխարհային ֆուտբոլի «աստղերով» եւ եվրոգավաթների մրցաշարերի ուղեգիր նվաճել։ Ֆուտբոլիստների ձեռքբերման համար նա արդեն ավելի քան



50 մլն եվրո է ծախսել։ Թիմ են հրավիրվել Ռուդ վան Նիստելռոյն ու Ժերեմի Թուլալանը։

Դեռ Էտո՛Օ-ի հարցը չլուծած, «Անժին» մտադիր է այլ ֆուտբոլիստների գնել։ Թիմի ղեկավարությունը հետաքրքրվում է «Բարսելոնի» եւ Բրազիլիայի հավաքականի պաշտպան Դանի Ալվեսի ծառայություններով։ «Անժին» պատրաստ է 28-ամյա ֆուտբոլիստի համար 35-40 մլն եվրո վճարել։ Ալվեսը «Անժիում» տարեկան 15 մլն եվրո կստանա ներկայիս 7 մլն-ի փոխարեն։

«Անժին» ցանկանում է նաեւ թիմ հրավիրել բելգիական «Ստանդարտի» կիսապաշտպան Մեհդի Կառսել Գոնսալեսին, որի համար պատրաստ է 9 մլն եվրո վճարել։

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

## Օրվա հետքերով

# Խղճի ազատության նոր օրենսդրական փաթեթով հոգեորսությունը քրեականացվում է

*1-ին էջից*

Ակնհայտ է, որ ոլորտի գործող օրենքները տասնամյակներով հետ են մնացել խղճի եւ կրոնի ազատության իրավունքի զարգացումներից, Հայաստանի միջազգային պարտավորություններից, ինչպես նաեւ բանական կառավարման ժամանակակից ավանդույթներից: Այնպես որ օրենքը փոխվում է, եւ արդարադատության նախարարության աշխատանքային խումբը, ղեկավարվելով սահմանադրությամբ եւ նոր միջազգային պարտավորությունների վրա հիմնվելով, խղճի եւ կրոնի ազատության վերաբերյալ այլ պետությունների դրական եւ բացասական փորձի վրա հենվելով՝ մշակել է ժողովրդավարական երկրին հարիր (սա փոխնախարարի բնորոշումն է) նոր օրինագիծ՝ խղճի եւ կրոնի ազատության վերաբերյալ, ինչպես նաեւ դրանից բխող մի շարք օրինագծեր:

Այս նոր նախագծով էլ եկեղեցին անջատ է պետությունից, բայց եւ ճանաչվում է Հայաստանյայց առաքելական եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի կյանքում՝ ազգային մշակույթի զարգացման եւ ազգային ինքնության պահպանման գործում: Ապա եւ հետեւում է օրենքով սահմանված բոլոր կրոնական կազմակերպությունների գործունեությանը: Միեւնույն ժամանակ, տուրք տալով Հայ առաքելական եկեղեցու առանձնահատուկ կարգավիճակին, սահմանվում է, որ նրա եւ պետության միջեւ հարաբերությունները կարող են կարգավորվել օրենքով: Պետության եւ եկեղեցու տարանջատումը շատ խիստ չէ, այլ պայմանական, փոխգործակցության եղանակներ են թողնվել: Որեւէ դրույթ չկա կրոնը փոխելու ազատության մասին, բայց եւ օրինագիծը յուրաքանչյուր անձի համար երաշխավորում է կրոնի, խղճի եւ համոզմունքի ազատությունը, այդ թվում՝ ծնողներին իրավունք է տրվում դաստիարակելու իրենց երեխաներին սեփական համոզմունքներին համապատասխան: Սահմանվում են խտրականության արգելքները, կրոնական թշնամանքի եւ ատելության հրահրման անթույլատրելիությունը, եւ դրանց դեպքերում օրենքով նախատեսված կրոնական եւ վարչական պատասխանատվության առաջացումը: Սահմանվում են կրոնական ազատությունների սահմանափակման հիմքերը, «ոչ պատշաճ հոգեորսություն հասկացությունը». մասնավորապես՝ այլ կրոնական կամ դավանաբանական պատկանելություն կամ հայացքներ ունեցող անձանց նկատմամբ, դավանափոխ անելու նպատակով, կրոնական բնույթի յուրաքանչյուր քարոզչական ներգործություն, որը դրսեւորվում է ֆիզիկական կամ հոգեբանական ներգործությամբ, նյութական կամ սոցիալական բնույթի առավելություններ տրամադրելով կամ կախվածություն օգտագործելով՝ պատասխանատվություն է առաջացնում: Նախագծում տրվում է «կրոնական միավորում» հասկացության սահմանումը՝ միաժամանակ տարանջատելով կրոնական խումբ եւ կրոնական կազմակերպություն հասկացությունները: Մասնավորապես՝ կրոնական խումբը, որ նվազագույնը 25 անձից է բաղկացած, առանց պետական գրանցման կարող է գործել, իսկ կրոնական կազմակերպությունը, էլի նվազագույնը 25 անձից, պետք է գրանցվի որպես իրավաբանական անձ: Կազմակերպությունների գրանցման հիմքերը գործող օրենքի համեմատ այնքան ողջամիտ են նախատեսված, որ չեն կարող խոչընդոտել օրենքներին համապատասխան որեւէ իրական կրոնական կազմակերպության գրանցումը, համենայնդեպս՝ ըստ փոխնախարարի: Միակ պահանջը կրոնական ուղղվածության հիմնավորումն է: Կրոնական կազմակերպության ձեւավորմանը պետությունը որեւէ ձեւով չի կարող միջամտել, այնքան որ հստակեցված են կրոնական կազմակերպությունների իրավունքները եւ սահմանված պարտականությունները:

Փոփոխություններ են նախատեսված վարչական եւ քրեական օրենսգրքերում՝ կրոնական ազատություններին միջամտելու համար վարչական պատասխանատվություն է նախատեսված, եւ, փաստորեն, քրեականացվում է նաեւ ոչ պատշաճ հոգեորսությունը: Ասենք, որ «հոգեորսություն» բառը քննադատության ենթարկվեց ներկա կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից (Սամվել Նավոյան, Լեւոն Բարդակչյան), ինչն ընդունեց արդարադատության փոխնախարարը՝ առաջարկելով ավելի հարմար տերմին գտնել: Նախագիծն էլի նորություն ունի՝ կրոնական կազմակերպությունների հրապարակայնության վերաբերյալ: Կրոնական կազմակերպությունները պետք է իրենց գործունեության վերաբերյալ հրապարակեն տեղեկություններ՝ տարեկան եկամուտների ընդհանուր գումարը, տարեկան ծախսերի ընդհանուր գումարը, նախորդ տարվա գործունեության նկարագրություն, ծրագրերի անվանումներն ու վայրերը, կազմակերպությունների թիվը, ղեկավար մարմինները, պաշտոնավարող անձանց անուններն ու ազգանունները: Իրենց կայքերում են պարտավոր հրապարակել հաշվետվությունները, կամ արդարադատության նախարարությանը պետք է հանձնեն՝ վերջինիս կայքում արտացոլելու համար (այս դրույթը եւս արժանացավ կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչների քննադատությանը): Կրոնական կազմակերպության գործունեության վերահսկողության վերաբերյալ եւս դրույթ է լինելու, քանի որ ըստ փոխնախարար Մուրադյանի՝ պատշաճ վերահսկողության դեպքում միայն կարելի կլինի երաշխավորել կրոնական կազմակերպությունների կողմից օրենքների պահանջների կատարումը, իսկ դրանք խախտողներին իրավական պատասխանատվության ենթարկել. «Նախագիծը չի հիմնվում արգելքների մոտեցումների վրա, դրանք համարելով վերջին միջոց», ամփոփեց փոխնախարարը՝ հավելելով, որ կրոնական կազմակերպության լուծարման հիմքերն ու դատական կարգով լուծարման դեպքերը եւս նախատեսված են:

Ասենք, որ նոր օրենքի նախագիծը արդեն իսկ կլոր սեղանի ընթացքում քննադատության արժանացավ, հատկապես նրա մի շարք դրույթներ: Այդ մասին մյուս քննարկումից հետո կգրենք, քանի որ հաստատ այս մի քննարկումով շահագրգիռ շրջանակները չեն բավարարվի, միայն մեջբերենք «Համագործակցություն հանուն ժողովրդավարության» ՀԿ նախագահի Ստեփան Դանիելյանի կարծիքը. «Օրենքը շատ թերություններ ունի, կան բազմաթիվ հոդվածներ, որոնց մասին բացասական կարծիքներ են հնչել: Մտածողության, փիլիսոփայության փոփոխություն կա՝ առաջ գրանցելը կրոնական կազմակերպության համար թույլտվություն էր դիտվում, տարբեր կազմակերպություններ ժամանակին պայքարում էին գրանցման համար, հիմա հակառակն է տեղի ունենում՝ պարտադրում են գրանցվել, ով չի գրանցվում՝ պատժում են: Եվ գրանցումը ենթադրում է վերահսկողության որոշակի դաշտ. ֆինանսական հաշվետվությունների պահանջն, օրինակ, կարելի է դրական համարել, սակայն մյուս կողմից, ցանկության դեպքում, այդ վերահսկողությունը կարող է պատժիչ բնույթ ստանալ, եւ արդարադատության նախարարությունը քաղաքական ոստիկանության հիմքը կարող է դնել, որը պետք վերահսկի կուսակցություններին, ՀԿ-ներին եւ կրոնական կազմակերպություններին: Այստեղ վտանգ եմ տեսնում»:

Մի խոսքով՝ պետությունը խնդիր ունի ստեղծել այնպիսի օրենք, որը թույլ տա հարգել մարդու կրոնական ազատությունները, կատարել միջազգային պարտավորությունները՝ միաժամանակ դաշտ չստեղծելով, որ այլասիրական կրոնական ուղղությունները խեղդեն մեզ. դժվարին առաքելություն, որ շատ խոչուխութեր դեռ պետք է անցնի:

**ՀԵՏԵՎԵԼՈՎ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՆ**

# Չէր խանգարի

*1-ին էջից*

Այդ վերնախավն է, որ պետական պատվեր է իջեցրել, որպեսզի Բաքիխանովի անվան պատմության ինստիտուտը «գրի Հարավային Կովկասի ճշմարիտ պատմությունը»: Եվ նա է, որ հովանավորում է այն «գիտնականներին», որ Կովկասում հայ ժողովրդի, հայկական տարրի «ծագումը վերագրում են 1828թ. հետո ժամանակներին»:

Այդ ամենն, ինչ խոսք, արժանանում է հայկական կողմի համարժեք արձագանքին: Ավելին, մենք երբեմն շատ բան նույնիսկ «չենք նկատում»: Մինչդեռ Ադրբեջանում բանը հասցնում են աբսուրդի: Չենք չափազանցում, վերջերս Բաքվի ռեստորաններից մեկի շեֆ խոհարարը մի ադրբեջանական լրատվամիջոցի հարցազրույց էր տվել եւ հպարտ-հպարտ ասել, որ ինքը «խոհարարական պատերազմում հայերին պարտության է մատնել եւ ապացուցել, որ «դոլման» բնիկ ադրբեջանական ազգային կերակրատեսակ է»: Եվ սա՝ կիսապաշտոնական լրատվամիջոցում, որն, ի դեպ, մարզական լուրերից մեկն այսպես է վերնագրել. «Ադրբեջանցի մարզիկները դարձան Եվրոպայի չեմպիոն՝ եզրափակիչում հաղթելով հայերին»:

Մի՞թե սա ադրբեջանական հասարակության կայացածության մասին է խոսում: Մի՞թե կարելի է շախմատի աշխարհի առաջնությունում անհաջող ելույթի համար սփոփիչ բացատրություն գտնել եւ գրել, թե «փառք աստծո, մեր թիմը հայերի հետ ոչ ոքի խաղաց»: Իսկ ի՞նչ տվեց այդ «ոչ ոք»-ին ադրբեջանցի շախմատիստներին: Ստացվում է, որ բոլորին պատրաստ էին պարտվել, միայն թե հայերի հետ «ոչ ոք»-ի խաղայի՞ն: Իսկ եթե այդ մրցամարտում Ադրբեջանի թիմը հաղթեր եւ Հայաստանը շախմատի չեմպիոն չդառնա՞ր: Այդ դեպքում, ամենայն հավանականությամբ, Իլհամ Ալիեւն անձամբ կգնար Հեյդար Ալիեւի անվան օդանավակայան եւ նրանց բոլորի ճակատը կհամբուրեր: Եվ սա մակարդա՞կ է:

Չէր խանգարի, որ Զարդուշտ Ալիզադեն, որ «չեզոք դաշտում» երբեմն «համարձակ» գաղափարներ է շոշափում, իր ժողովրդի եւ հասարակության ուշադրությունը հրավիրեր նման ախտանիշների սուր վտանգավորությանը: Այո, ադրբեջանական հասարակությունը, գոնե այնքանով, որ մատուցում են լրատվամիջոցները, հիվանդ է հայատյացությամբ եւ մեծամտությամբ: Այդ հասարակության կարծիքով՝ Ադրբեջանում ամեն ինչ «ամենա-ամենա» է՝ բանակը, տնտեսությունը, կրթությունը, սպորտը, մշակույթը, նույնիսկ օդը եւ ջուրը: Այդ հասարակության տպավորությամբ՝ եթե ոչ այսօր, ապա վաղն իրենն է լինելու ողջ Կովկասը: Այդ հիվանդությունն ախտորոշվում է որպես «գերազանցության մանիա»: Մարդկության պատմության մեջ վերջին անգամ այդ ախտն իր ժողովրդին ներարկել է Ադոլֆ Հիտլերը: Իլհամ Ալիեւը համարձակվում է կրկնել այդ փորձը: Եվ չէր խանգարի, որ Զարդուշտ Ալիզադեն, որպես իր հայրենիքի նվիրյալ, բռներ այն ձեռքը, որ թույն է խառնում սեփական ժողովրդի օրվա հացին:


## Վաճառվում է LADA Priora

մակնիշի ավտոմեքենա, 2008 թվականի արտադրության, 2010 թվականի վաճառք: Գտնվում է գործարանային երաշխիքի մեջ: Վազքը՝ 13 000 կմ, գույնը՝ սեւ մետալիկ, հեչբեք: Ունի՝ կոնդիցիոներ, անվտանգության բարձիկ, բորտ համակարգիչ, հայելիների եւ ապակիների (մուգ) էլեկտրոնային կարգավորում, բարձրակարգ աուդիո համակարգ՝ Bluetooth-ով եւ iPhone/iPod միացումով: Տրվում են նաեւ 4 ձմեռային անվադողեր՝ համարյա նոր վիճակում:

**Հեռ.՝ (094) 401-337**


## ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի և ՀՀ կառավարության 07.03.03թ N 217-Ն և N 218-Ն որոշումների պահանջների համաձայն մշակվում է «Քեմփ Վենչուրս» ՓԲԸ կողմից խմելու ջրամատակարարման համար նախատեսվող 2 աղբյուրների ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին, ժամը 17:00-18:00-ն դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարության 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2011թ. օգոստոսի 20-ին, ժամը 12:00-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

*ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

## Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների վիճակը և կազմը

**ՀՀ կենտրոնական բանկը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածի դրույթներով, ներկայացնում է**

**ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

**Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների վիճակի և կազմի մասին**

2011 2-րդ եռամսյակ (ներառյալ եզրափակիչ շրջանառությունը)

| | | | |
|---|---|---|---|
| **Եռամսյակի սկիզբ** | | | |
| I.Համախառն արտաքին ակտիվներ | | 1,823,443,175.87 | ԱՄՆ դոլար |
| այդ թվում՝ | | | |
| միջազգային պահուստներ (համախառն արտաքին ակտիվներ ազատ փոխարկելի արժույթով) | | 1,823,442,611.95 | ԱՄՆ դոլար |
| որից՝ | | | |
| ՀՓԻ ԱՄՀ-ում | 19,873,717.00 ՀՓԻ | 31,509,871.35 | ԱՄՆ դոլար |
| պահուստային դիրք ԱՄՀ-ում | 0.00 ՀՓԻ | 0.00 | ԱՄՆ դոլար |
| II. Զուտ արտաքին ակտիվներ | | 1,101,748,095.43 | ԱՄՆ դոլար |
| որից՝ ազատ փոխարկելի արժույթով | | 1,101,747,531.51 | ԱՄՆ դոլար |
| **Եռամսյակի վերջ** | | | |
| I.Համախառն արտաքին ակտիվներ | | 1,782,034,585.73 | ԱՄՆ դոլար |
| այդ թվում՝ | | | |
| միջազգային պահուստներ (համախառն արտաքին ակտիվներ ազատ փոխարկելի արժույթով) | | 1,782,034,032.91 | ԱՄՆ դոլար |
| որից՝ | | | |
| ՀՓԻ ԱՄՀ-ում | 10,257,135.00 ՀՓԻ | 16,416,012.48 | ԱՄՆ դոլար |
| պահուստային դիրք ԱՄՀ-ում | 0.00 ՀՓԻ | 0.00 | ԱՄՆ դոլար |
| II.Զուտ արտաքին ակտիվներ | | 1,065,463,805.99 | ԱՄՆ դոլար |
| որից՝ ազատ փոխարկելի արժույթով | | 1,065,463,253.17 | ԱՄՆ դոլար |

*ՆԱԽԱԳԱՀ* *ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆ*

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

**Հայտարարության սույն տեքստը հաստատված է պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 17-ի որոշմամբ եւ հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն**
**Պարզեցված ընթացակարգի ծածկագիրը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ - ԱՇՁԲ - 25**

Պատվիրատուն՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, որը գտնվում է ՀՀ ք. Երեւան, Մ.Խորենացու-3,7 հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգով գնում, որն անցկացվելու է մեկ փուլով:

Պարզեցված ընթացակարգով գնման հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ վարչական շենքի հարակից գազատարի վերատեղադրման եւ արտաքին գազաֆիկացման աշխատանքների ձեռքբերման գնման պայմանագիր (այսուհետեւ՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանալու ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ վարչական շենքի հարակից գազատարի վերատեղադրման եւ արտաքին գազաֆիկացման աշխատանքների ձեռքբերումը:

Կնքվելիք պայմանագրի կատարման ժամկետը՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչեւ պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ավարտն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ պարզեցված ընթացակարգի հայտեր կարող են ներկայացնել բոլոր անձինք, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման պահանջներին:

Պարզեցված ընթացակարգի հայտարարության հիման վրա պատվիրատուին գրավոր պահանջ ներկայացրած անձն իրավունք ունի այդ պահանջը ներկայացնելու օրվա ընթացքում թղթային ձեւով ստանալ անվճար հրավեր:

Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի պահանջների համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի եւ գնահատող հանձնաժողովի գործողությունները եւ որոշումները գնումների բողոքարկման խորհրդին՝ գնումների աջակցման կենտրոն, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

Պարզեցված ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե, ք. Երեւան, Մ.Խորենացու-7, 107 սենյակ հասցեով, մինչեւ 26.08.11թ ժամը՝ 16:00-ն, դրանք պետք է կազմված լինեն հայերեն: Հայտերը բացվում են հայտերի բացման նիստում՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետին:

Պարզեցված ընթացակարգի հաղթողը կճանաչվի մասնակիցների բավարար գնահատված հայտերից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի հայտը:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար, մասնակիցները պետք է պատվիրատուին ներկայացնեն պարզեցված ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

*ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե*

**Կորել է**

«Գեւորգ Բիձյան» ՍՊԸ-ի դրամարկղի գիրքը: 099-22-11-11, 094-80-66-66, Ռոբերտ:

www.azg.am

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 19.8.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: